

„Droschak“

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:

RÉDACTION DU JOURNAL

Droschak“

GENÈVE (Suisse)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԵԼԿԵՆ ԴԱՋՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

ԱՐԹՈՒՆ ԼԻՆԵՆՔ

Յեղափոխական փրկարար գաղափարը սոսկալի ժողովրդի էր ենթարկել 1895-96-ի աղետներից յետոյ: Ընդհանուր հիասթափութեան և յետաշրջման մի անմիտ, բայց իր անմտութեան մեջ ուժեղ, տարերային մի հոսանք էր տիրել մեր հասարակութեան բազմազան խաւերին: Սարսափած մեծամասնութիւնը անէծքներ կարգաց մեր շարժման հասցէին, մեծախօս, բայց փոքրոգի տարրերը շտապեցին փախուստ տալ յեղափոխական բանակից, հրապարակը գրաւուեց զանազան կարգի դպիրներով ու գալրիկներով որոնք հանդէս եկան մեր վաշխառու հայրերի իմաստութիւնը մեզ քարոզելու, յեղափոխականը հուշակեց անգործ և աղքատաց, գատարկապրտ, գաղափարը նսեմացաւ իր խոյանքների, իր հմայքի, իր սրբազան նպատակների կախարդական ուժի մէջ — և թուում էր, որ մեր շարժումը հետզհետէ կզղիւնաւորուէ, հետզհետէ աւելի և աւելի նեղ շրջաններում սահմանափակելու վտանգաւոր անհրաժեշտութեան էր մատնւում:

Անցան սակայն տարիներ: Ո՛չ մի տեսակի երկիւղ, ո՛չ մի կարգի օրօրներ, ո՛չ մի վճռական պատգամ — թէկուզ նոյնիսկ հասարակութեան ճաշակին յարմարւելու միշտ պատրաստ փեշակաւոր «պետերի» բերաններից — չկարողացան քողարկել կեանքը և իրականութիւնը, ու յեղափոխական շարժումը, իբր տեղի և ժամանակի հարապատ ծնունդ, թէև վիրաւոր, բայց նւիրական պահանջներով սրբագործւած, մնաց կենդանի, մնաց անսասան: Եւ աւելին:

Վերջին ժամանակներս զանազան տեղերից մեզ հասնող տեղեկութիւնները, բազմաթիւ ընկերների գիտողութիւնները և հրապարակի վրայ նկատուող այլևայլ իրողութիւնները կարծել են տալիս, որ մենք գտնւում ենք այնպիսի օրերում, երբ գուցէ շուտով կարող կը լինենք տեսնել յետաշրջման անիծեալ, խաւար օրերը փոխարինւած նոր, օրհնեալ հոսանքով:

Սփոփիչ, ուրախալի՛ նշաններ:

Այդպէս է միշտ՝ տատանուող մտքի անզօրութեանը կեանքի զօրութեան առաջ:

Եւ թող այսօր աչքի ընկնող միութարական երևոյթները իմաստալից խրատ լինեն անկեղծ յեղափոխականների և յեղափոխութեան համակիրների համար, որպէս զի

ամենանեղ օրերում իսկ՝ նրանք ամուր մնան իրենց հաւատի մէջ և չ'ընկճւեն, չգայթակղւեն ձախորդութիւնների ճնշող ազդեցութիւններից: Ամբոխը — բոլոր ազգերի մէջ միշտ նման ամբոխը — յաջողութեան այդ յաւիտենական ստրուկը և հապարգիւնեան ըմբոստը անյաջողութեան դէպքերում, — մեզ ուղեցոյց չէ կարող լինել: Հասկանալի, որ եթէ շատ վառ յոյսեր երբեմն կարող են խաբուսիկ լինել, հապա անհամեմատ աւելի ծանր են իրենց հետևանքներով փոքրօգութեան ու շուտափոյթ հիասթափութիւնների դատապարտելի օրինակները: Մենք պէտք է ամէն կերպ զերծ մնանք թուլութեան այդ ականից, մենք պէտք է ջանանք զերծ պահել և այն շրջանները, որոնց հետ շփուում ենք: Բոլոր միւս հաւասար պայմաններում, անհատը կարող է յեղափոխական ճանաչել և կը մ'նայ յեղափոխական, երբ նա առաջնորդւում է կեանքի ոչ թէ օրէօր տեղացող, ժամանակաւոր և յաճախ պատահական ելևէջներով, այլ երբ նա հասկանում է տիրող դրութիւնը, գիտակցում է ժողովրդական կեանքի հիմնական պահանջները և ըմբռնում է իր ժամանակի դերակատար գործօնների բնոււորութիւնը:

Յիշում էք, ընթերցող, «Դրօշակի» անցեալ համարից, սասունցի կանանց դիմադրութիւնը զօրանոցներ չլինելու գնացողներին: Այդպէս է ահա խօսում կեանքը: Այն ժամանակ, երբ արտասահմանում թէ երկրում, ինտելիգենտ կամ ագէտ ամբոխը իր վատութեան մէջ տընում է մեզ յետ դարձնելու դէպի մի քաղաքականութիւն, որը տրամագծօրէն հակասում է իշխող պայմաններին, — այդ ժամանակ ահա կեանքը, երես դարձնելով մարդկային յիմարութեան այդ ասպետներից, իր համար առաքել է ընտրում սասունցի կնոջը: Թող լռէ Կարինը, Վանը, Ժընէվը, բայց դա ոչ մի երաշխաւորութիւն չի տալ, որ կը լռեն նրանց հետ Սասունն ու Մուշը: Թող լռեն վաղը Զէյթուն, Պօլիս, Լօնդօն, բայց մենք չենք կարող ապահովւած լինել, որ մի օր ձայն չեն բարձրացնի Բաղէշն ու Խարբերդը: Թող լռէ անասուն հայ բուրժուան, թող համբերէ փարիսեցի հայ հոգեւորականը, թող յարմարէ վաշխառու հայ ինտելիգենտը, թող վայր դնէ դաշոյնը «խելոքացած» հայ յեղափոխականը, թող շատ-շատերը անեն, ինչ հեռու է բողոքից, ըսկից, կռից, զէնքից, անձնւիրութիւնից, բայց չի լռի գաղափարական ինտելիգենտը, որ անկարող է անտարբեր մնալ իր ժողովրդի արեան դիմաց, չի

յարմարւի ազնիւ հոգեւորականը, որի սիրտը քար պիտի լինի իրականութիւնից չ'ազդուելու համար, չի համբերի ողջամիտ ուսմիկը, որը ստիպւած է սպանել որպէս զի ինքը չըսպանւի, չի փախչի կռից մորթւած մօր վրէժ- խնդիր զաւակը և մինչև իսկ աւանդապա՛հ հայ կինը՝ թէկուզ միայն ձեռքը ընկած քարերով... Ահա ո՛ւր է կ ե ա ն ք ի ո յ ժ ք:

Եւ հասկանալի է. երբ չեն վերացել սպանիչ պայ- մանները, երբ չէ լուում վայրագ թշնամին, ոչինչ չէ կարող խաղաղացնել հայութեան փոքրիշատէ առողջ մասերը:

Մենք գիտենք այդ բոլորը. գիտենք նաև թշնամու դրուծիւնը հանդերձ իր առաւելութիւններով ու նրան ճնշող պայմաններով. գիտենք, որ միայն սեհոգի փարիսե- ցիները կարող են պնդել, թէ ազատութիւն պահանջելով կարելի է արգելք հանդիսանալ մի ժողովրդի զարգացմանը. գիտենք, որ՝ մեր կեանքը տալով հայ ժողովրդի ազա- տական գաղափարներին, մենք չենք կարող փնասել մեր ամենաբարձր խոհերի այդ միակ առարկային, — և մեր այդ գիտեցածները մեզ բաւական են, անկախ արտաքին անհաստատ հանգամանքներից, մեր սեփական գ ի ծ ք, մեր մշտական ու զ ի ն ունենալու համար:

Այդ անհրաժեշտ է միշտ, անհրաժեշտ է և այժմ, երբ ըստ երևոյթին մենք գտնուում ենք համեմատաբար յուսատու պայմաններում:

Արթո՛ւն լինինք: Օրէօր մեր կեանքում տեղացող նորանոր երևոյթները վերին աստիճանի սուր բնաւո- րութիւն են տալիս ներկայ ըոպէին:

Ահա սոսկալի աւերումներ Մուշում. ահա տասնեակ հայ գիւղեր քրդերի և թիւրք զինւորների ձեռքով թալանւած ու կողոպտւած. ահա Սասունը կորստեան նախադռնում. ահա անմեղ նահատակներից կազմւած նորանոր բուրգեր: Ահա միաժամանակ նաև հերոսական ընդհարումներ երկրորդ. ահա հայ յեղափոխականի դա- շայնը գէս ու գէն հայութեան թշնամիների կրծքին խրած. ահա Փրանս-տաճկական անհամաձայնութիւնը. ահա մի շարք գիւղացիներ ֆրանսիական նախարարութեան և յուսատու լուրեր. ահա նաև Խաղաղութեան համա- ժողովի կամ ամերիկական ժողովրդի խրախուսիչ տրա- մադրութիւնները:

Վատը և լաւը, նպաստաւոր և աննպաստ լուրերը իրար զուգադիպում, իրար խառնուում, երբեմն իրար նշանակութիւնը հերքում, մի ըոպէ ոգեւորում, միւս ըոպէ ընկճում, բայց շարունակ լ ա Ր Ո Ւ Մ են հայ հասա- րակութեան ուշադրութիւնը:

Այդպիսի լարւած դրութիւն, իհարկէ, չէ կարող երկարատև լինել, և ընթացիկ օրերի այդ բնաւորութիւնն է, որ պահանջում է մեր արթնութիւնը: Ինչ լաւ է — լաւ է արդէն. ինչ կը լինի լաւ, մենք երբեք չենք յա- պաղի ընդգրկելու սրտի ամենանւիրական թափով բա- րեպատե՛հ առիթներ էլ չենք բաց թողնի ընթացիկ հանգամանքներում կարելին անելու. բայց արթուն լինենք

ըոպէների ազդեցութեան չենթարկւելու, որպէս զի, յա- մենայն դէպս, հեռու մնանք նոր հիասթափութիւններից:

Այսպէս ընթանալով միայն՝ մենք կարող ենք հա- մոզւած լինել, որ եթէ էգուց նոյնիսկ մեզ սպասում լինեն ոչ թէ ցանկալի ոգեւորութեան օրեր, այլ կրկին յետաշրջման մի կոյր յորձանք, այդ յորձանքն էլ պիտի յաղթահարենք և վաղ թէ ուշ պիտի ընդհանրացնենք այն յոյսերը, որ վառ են մեր սրտերում, այն հաւատը, որ երբեք մեզ չէ թողնում, այն գաղափարները, որ մշտապէս բորբոքում են մեր հոգիները:

Արթո՛ւն լինենք:

Ձ Ա Յ Ն Մ Ը Ե Ր Կ Ր Է Ն

Սեպտեմբեր 28-ին երկրէն ստացւած նամակէ մը, որ հրատա- րակութեան չէ յատկացւած, կը քաղենք քառ առ քառ հետեւեալ կտորը, քողարկելով միայն յիշւած տեղերու անունները:

... «Գործիչներու պակասը խիստ զգալի է ամէն կողմ: Ահագին հեռաւորութիւններէ ինձ կը դիմեն, իբրև յու- սատու աստղի մը, իսկ ես չեմ կրնար իմ տեղս թողնել: Ա. . . իր բոլոր գաւառներով, Բ. . . էն մինչև Գ. . . Դ. . . իր շրջականերով՝ անդադար գործիչներ կը պա- հանջեն: Դրսէն եկող զարգացած ընկերներ յոյժ կա- րեւոր են տեղական մարմիններու միջև կապ պահպանելու և ամրապնդելու համար: Հրայր ինձ կը գրէ անցնիլ Բ. . . Գ. . . էն կը պահանջեն զիս, Բ. . . էն նոյնպէս... Գանի՞ կտոր ըլլալ. ո՛ւր երթալ:

«Կը կրկնեմ, դրսի գործիչներու գոյութիւնը խիստ անհրաժեշտ է. ուր որ մտնեն՝ յոյս և ոգեւորութիւն կը ներշնչեն, կենդանութիւն կուտան գործին:

«Անդադար յորդորելու և քաջալերելու է, որ զար- գացած անձինք մտնեն երկիր: Հոս է ահա գործունէու- թեան ասպարէզը: Ի՞նչ կը պոռան և կը պոռչտան Եգիպտոսի, Յունաստանի, Ամերիկայի, Պուկարիայի մէջ. միութիւն կը քարոզեն, ծրագրեն՝ կըստեղծեն ու կ'ոչըն- չացնեն... Չըլինի՞ թէ Եւրոպայի յեղափոխել կուզեն և կամ Հայաստանը հոն տեղափոխած են: Հաւատացէ՛ք, հոս յեղափոխութեան այնպիսի խուլ անկիւններ կան, որ ամէն կուսակցական կրնայ յաջողիլ, եթէ յանձն առնէ երկիր մտնելու:

«Դրօշակի՞» № 3-ի մէջ ամերիկահայերու վոյս կը գրէր «Թիւրքիոյ Շուրջի» մեր ընկերը: Լաւ գիտեմ, որ հոն աղմկողներու մէկ մասն իմ գտնւած տեղէն են: Ըսելու է այդ «ազգասէրներու», եթէ կը սիրէին իրենց ազգը՝ ինչո՞ւ փախած են հոն. իսկ եթէ փախչելու չափ երկչոտ էին, առի՞նչ ուրեմն կը յոխորտան: Ճշմարիտ յեղափոխականի մը պարտականութիւնն է մնալ երկրի մէջ. իսկ անոնք, որ իրենց կեանքը պահպանելու և բարեկեցիկ վիճակ մը փնտռելու համար կանցնին Ամե- րիկա և այլուր ու յեղափոխութեան անունով կ'աղմը կեն, — այդպիսիներ վատեր են պարզապէս: Գոնէ լուելու ամօթը թող ունենան:

«Այո, շատ ցաւալի է մեր վիճակը. հոտ, Եւրոպա, յոխորտացողներու մէկ քառորդը եթէ Հայաստանի մէջ լինին, ահագին գործ կը դառնայ»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Մ Ո Ւ Շ.

30 յուլիս

Մշտ և Դաշտի բռնկած հրդեհը գեռ կը շարունակուի:

Նախորդ տեղեկագրով Մ ո Ւ Շ - ք հայ գիւղի բնաջինջ լինելը նկարագրւած է: 95 հայեր, որոնց մէջ նաև կիներ ու աղջիկներ, դեռ բանտին մէջ կը տքնին: Բանտին դռները, այս ու այն անկիւններն իրարու վրայ դիզւած են բանտարկեալներ: Թիֆօի հիւանդութիւնը համաճարակ դարձած է բանտին մէջ տիրող անմաքրութեան և սովորական համարւած գազանութեանց ու ճնշմանց պատճառաւ: Հիւանդներն բոլորովին անխնամ վիճակի մէջ են. երկու օրէ ի վեր դիակներ դուրս կը նետուին անարգանքով և վայրենի ծիծաղներով: Հիւանդներու անտանելի դրութիւնը ողբերգական է. կարծես, հոն մահդկային սիրտ, կարեկցութիւն, մի փոքր քթութիւն գտնելը յանցանք է, մեղք է...

Բաղէշի կուսակալը, չկրնալով եւք մը գտնել այդ գոթիային ընդհանուր դրութեան և կարծես պատասխանատուութենէ մը զերծ մնալու համար, վերադարձաւ Բաղէշ: Շարաֆի եղբայրներն ու ազգականները, որ իբր թէ բանտարկւած էին կատարած յայտնի ոճիրներու և խժգոնութեանց պատճառաւ, ազատ արձակեցան...

Իսլամ հասարակութիւնը շատ լաւ հասկացած է տիրող կառավարութեան ոչնչացման ծրագիրը. սրբազան պարտք է դարձեր ամէն մի Մուհամմէդի զաւակին իր ձեռքէ եկածը չի խնայել թէ ոչ՝ նա իսլամ չէ, նա մուսուլման չէ: Մոկուլերի ցիրուցան եղող ընտանիքներու մնացորդը կառավարութեան ճնշման տակ վերադարձաւ աւերակ դարձած գիւղը: Մի քանի օր թող տւին ելնել գաշտ և հնձել ցանքերը: Ահա գիշեր մ'ալ օգի մէջ բարձրացող հարիւրաւոր կրակներու բոցերը լուսավառեցին ամբողջ գաշտը: Կախերու և արտերու մէջ դիզւած հինգ հարիւր բարդ (մէկ բարդ 30 խուրձ է) ցորեն կրակի տալով՝ դեռ չի յագենար իրենց կիրքը, կը հրկիզեն դեռ չհնձած արտերն ալ: Խեղճ գիւղացիք հազիւ միջոց կուենան շրջապատող բոցերէն ազատիլ և հասնիլ Մուշ: Այժմ անպաշտպան մնացած հարիւրաւոր կիներ, դեռահաս աղջիկներ, հարսներ ու երեխաներ, բոլորն ալ գունատ ու դալկահար, լցւած Մշոյ առաջնորդարանի մէջ, կը մուրան իրենց զաւակաց գոյութիւնը փրկելու յուսով: Տեղւոյս առաջնորդ Յովհաննէս վարդ. Մուրադեան, կարծես շարած անելանելի դրութեան առջև, անտարբեր կը մնայ: Անկարագրելի է մոկուլեցիներու վիճակը...

Այս բոլորի դէմ կառավարութիւնը առ երեւոյթս ալ ոչ մի ձեռնարկ չըրաւ: Իսկ երբ անցաւ քանի մը օր առ սև բոցերու ծուխեր բարձրացան երկինք և այրեցին գիւղի բոլոր շէնքերը ևս: Գիւղը դեռ կը մնայ: Այդ ալ թող մարդակեր սուլթանի գազանութեանց կարգը արձանագրուի՝ քսաներորդ դարու սեմի «ակեղտաման» մնալու:

Ամսոյս 15-ին, շամբքի և ալքքի քիւրդ ցեղերու հրաւիրանքը և առաջնորդութեամբ պատըքանցի աշիւրէթին, Գառանցի Աջո անուն յայտնի քիւրդը 30-40 ընկերներով յանձակելով Տ ա տ ր ա գ ո մ հայ գիւղի վրայ, խիստ աղետալի եղանակաւ, հրացանի գնդակներու,

սուրերու, տապարներու հարւածներով, կըսպաննեն նոյն գիւղացի Մըլէ հարուստ հայը: Հրացանի գնդակներէն ուղեղը թափւած էր, դիակը գազանաբար յօշոտւած, մարմինը վառօդով այրւած, կարծես խորոված դարձած էր. յոտից գլուխ մարմինը վերքերով լի էր: Կողոպտեն ամբողջ գիւղը, մինչև անգամ երեխաներու հագուստներն ալ կը տանին: Մըլէէն միայն տարւած է 440 ոչխար, 120 ուլ ու գառ և 17 եգ: Գիւղէն տարւած է ընդամենը 270 ուլ և գառ, 60 եգ ու արջառ, 48 կով հորթերով, 37 երինջ, 25 մօզի. իբաց կը թողում լիտրերով վազերն ու բուրդերը, իւղը, վերմակներ, կարպետներ, փաշասներ, թաղիքներ, պղնձեղէններ, մանգաղներ, փետտաներ, թիւեր, չանթաներ, տիկեր ու պարկեր: Ս. Յովհաննէս վանքին 7 եգ և 60 ոչխար Տատրագոմ եղած են, անոնք ալ տարւած են:

Այս քստմնելի արարքի հանդէպ ահա կառավարութեան խաղը: Իբր թէ 50-60 ձիաւոր զօրքով յարձակելով Աջոյ վրայ՝ կը ձերբակալեն զԱյո մէկ քանի ընկերներով, իսկ փոխանակ հայերէ տարւած ոչխարներու ու տաւարներու, կը բերեն քանի մը անմեղ քրդերու ոչխարներ ու տաւարներ: Արդէն հայերը գիտնալով, որ քրդերը այդ ոչխար-տաւարները կրկին յետ վերադարձնելէ զատ՝ իրենց կեանքն ու գոյութիւնն ալ վրայ պիտի տան, չեն համարձակիր առնել: Այոյի տունէն միայն ջորի մը բերւած է, զայն ալ Մուշ տարին զօրքերով: 2գիտներ, ինչ հիման վրայ Այոն իր ընկերներով ազատ արձակեցաւ: Այժմ տատրագոմի հայերուն լուր ղրկելով՝ իր ջորին անոնցմէ կը պահանջէ, հակառակ պարագային մէկ ջորու փոխարէն 12 մարդ սպաննել կըսպաննար: Մեղաւոր կը լինի Այոն, եթէ իր ծրագիրը չիրագործէ...

Ամսոյս 31-ին Ս. Յովհաննէս վանքի պահապան (չէնկլի-աղասի) Գ ո մ ե Ր գիւղացի Աուլոյի Օվոյ անուն դեռահաս, ազնիւ երիտասարդն վանքի ժօտիկ ֆարով-Աղբրիկ ըսւած տեղը կերթայ՝ քրդերէ վանքի տերէները պահելու համար: Անտառի մէջէն յանկարծ մէկ քանի քրդեր դուրս գալով՝ կըսպաննեն երիտասարդն և կ'անհետանան: Օր մը անցնելէ յետոյ դիակը կը գտնուի երբ կառավարութեան կողմէ քննիչներ կը բերին դիակի վրայ, պաշտօններէն մէկը, առանց ամօթի, առանց խղճահարութեան, «Ֆէզայիի գնդակի վերք է» կ'ըսէ, կարծես անուն մը գրւած լինէր վերքին վրայ...

Ամսոյս 17-ին սպաննուեցաւ Ախճան գիւղացի աէս Աարգան. ոճրագործները ազատ են:

Այս ամէնը կը կատարին յաջորդաբար: Ամէն օր նորանոր տեղեկութիւններ կը հասնին: Յ ե Ր ե կ լ ա յ գ ա զ ա ն ու թ ի լ ն ն ե Ր ը ե Ր ե կ ո յ ե ա ն հ ա մ ա Ր հ ն ու թ ի լ ն ն ե Ր են:

Երկրագործի հունձքերն դաշտի մէջ կը մնան, ոչ ոք չի համարձակիր տնէն դուրս գնալ: Ամէն կողմէ գիւղացիք կառավարութեան դիմումներ ընելով, ոստիկաններ, զօրքեր կը պահանջեն պահպանութեան համար, որպէս զի կարենան ցանքերը հնձել: Բայց ո՞վ է լսողը կամ ո՞վ է գլխացողը...

Մուշ և Դաշտ, այս անօրինակ կեանքէն բոլորովին յուսահատ մնացած, ահա շարաթէ մը իվեր է, թաղութեամբ թափւած Առաջնորդարան, կը պահանջեն տիրող հրդեհին ու գազանութեանց վերջ մը տալ եւք մը գտնել, «եթէ ոչ՝ կրօնափոխութեան, օրթոդոքս եկեղեցւոյն կը դիմենք», կ'ըսեն ու կը պոռան: Տեղւոյս ազ-

գային վարչութիւնն ալ, հակառակ իր կոչման բարձր պարտականութեան, համակարծիք է ժողովրդի այս բոլորովին կորստաբեր ծրագրին: Հանրագրութիւններ կը պատրաստեն ամէն օր եռանդով: Առաջը կտրել անհնարին կերակ. . . Ահա նոր կոտորած, ահա ընդհանուր մեծ կորուստ:

Սասունն ալ շրջապատւած է կանոնաւոր զօրքերով ու քիւրդ աշիրէթներով: Երթեկութիւնները բոլորովին դադրած են: Միայն այսքանը գիտենք, որ կառավարութիւնը զօրանոցներ շինելու ձեռնարկէն յետ քաշւած է առ այժմ, ո՞ր գիտէ, ինչ ինտրիգներ լարելու նպատակով:

Ահա մեր վերջին մէկ քանի օրւայ կեանքի դառնութիւններն ալ նկարագրելով մեր հայրենակցաց և օտարաբնակ հայ եղբայրներուն, կը բողբոքեմ իրենց անտարբերութեան դէմ, կը գանգատիմ իրենց ժայռ կտրած սրտերու դէմ: Ընթերցողները թող վստահաբար գիտնան՝ թէ մեր նկարագրութիւնները, առանց ուէ չնչին չափազանցութեան, նոյնիսկ մանրամասնութիւնները զանց ընելով, լոկ նորանոր երեւոյթներով յառաջ եկած գաղանթութիւններու ստուգութիւններն են:

Եթէ այս ծով ցաւերու մէջէն երբեմն-երբեմն կը յաջողենք ողբերգներ կատարել, այն ոչ թէ մեր հեռավոր եղբայրներու իբր թէ զգայուն սիրտերը շարժելու յոյսով է, այլ ապագայ սերունդին համար՝ պատմութեան մէջ դարուս հրէշաւոր արարքներուն իրական պատկերները թողնելով, մեր անտարբեր եղբայրները, մարդակեր Համիդն ու անոր մեղսակից Եւրօպան յաւիտենական անէծքի դատապարտելու համար է. . .

Ե Ի Ր Օ Պ Ա Կ Ա Ն Թ Ե Ր Թ Ե Ր Է

Պօլիսէն սեպտ. 23 Թւով Berliner Lokal Anzeiger-ին կը հեռագրեն.

«Սասունը չորս թիւրք վաշտերու կողմէ այնպէս պաշարւած է, որ մինչեւ իսկ կէս ժամ հեռու գտնուող Մշոյ մէջ չի գիտցուիր բացարձակապէս թէ ի՞նչ կանցնի, կը դառնայ Սասուն: Ամենագէշ քաններէ կը վախցնի: Հոս ամէն լուր կը պակսի: Հայոց պատրիարքարանը Դրան հաւանութեամբ քարծրաստիճան ինքնուրուական մը զրկեց Մուշ այնտեղի անցուղարձերուն մասին լուրեր աննշու համար: Կ'ըսեն թէ մեծ թւով քիւրդեր կը գտնուին Սասունի մէջ: Պտրտած լուրերուն նայելով այնտեղի գործողութիւնները ուղղակի յընդդէմ կը դեկավարին, առանց կառավարութեան զիտութեան, ինչպէս նաեւ դէպի նահանգները առաքուած բազմաթիւ իւլէմաներու, որոնց գրգռիչ գործունէութեան կը վերագրուին արդէն Սասնոյ նոր դէպքերը: Ընդհանուր կացութիւնը նման է հինգ տարի առաջւան կոտորածներէն առաջ տիրող վիճակին»:

Կ. Պօլիսէն սեպտ. 25 Թւականով Frankfurter Zeitung-ին կը հեռագրեն.

«Հայկական նահանգներէն դեսպաններուն ղրկւած ըլլալը ծանուցւած շատ մը հիւպատոսական տեղեկագիրներ չեն հասած. կ'ենթադրեն թէ թիւրք իշխանութիւնները վար դրած են զանոնք: Էրզրումի քրտնական հիւպատոսարանի թարգմանը, որ տեղեկատուութեան համար հոս կանչւած էր, տեղոյն կուսակալին կողմէ քրկու անգամ ժամըոթըութնէն արգիւյն է: Դեսպանատան գործակատար Բապտ քաց հեռագիր մը ուղղեց վալիին, ուր զինք անմնապէս պատասխանատու կը քննէ, եթէ շարունակէ հակառակիլ թարգմանին ժամըոթըութնէն»:

Պօլիսէն սեպտ. 25 Թւով կը գրեն Temps-ին.

«Հայաստանէն հասած հազագիւտ լուրերուն մէջէն ծանուցանելու արժանի է սեպտ. 4-ին, չորեքշաբթի օրը,

Էրզրումի 7-րդ զօրաբաժինի հրամանատար Մէհմէդ-Ալի փաշայի մեկնումը՝ ութ կանոնաւոր վաշտերով երթալ զինուորական կերպով գրաւելու համար Սասնոյ գաւառը: Փայտամրոցներ պիտի շինուին Ցալուրիկ, Սէմալ և Գէլիէ-գուզան հայ գիւղերու մէջ:

«Միւս կողմէ Պիթիսի վալին նոյն օրը Մուշ հասած է վարելու համար այս գաւառին վարչութիւնը: Խռովութիւնը այնչափ մեծցած է, որ Մուշի պատրիարքական փոխանորդը թողլուութիւն խնդրած է իր պաշտօնը թողնելու:

«Էրզրումի մէջ կը շարունակէ լուր շրջիլ թէ արիւնահեղ ընդհանրում մը տեղի ունեցած է հայերու և համիդիէ վաշտերու միջև: Բայց ոչ մի գրական լուր ստացւած չէ դեռ ձեռնհաս աղբիւրէ:

«Անհամբերութեամբ կըսպասուի այն տեղեկութիւններուն, որ տեղին վրայ պիտի կրնայ հաւաքել Վանի ռուսական հիւպատոսը, զոր Պօլսոյ դեսպանատունը Մուշ ջրկած է»:

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԲՈՂՈՔ ՀԱՄԻԴԻՅԷՆԵՐՈՒ ԴԷՄ

(ՆԱՄԱԿ ԱՍՊՊՈՂՈՒԿԱՆՆ)

10 յունիս 1901

Թիւրք ու քիւրդ խաղաղ տարրին և ոչ-համիդիէ աշիրէթներու մէջ՝ մեծ դժգոհութիւն կայ համիդիէներու նկատմամբ, զոր 1900 տարեշրջանին մէջ սկսան բացայայտ ցոյց տալ: Համիդիէներ իրենց դիրքին շնորհիւ կարեւորութիւն չեն տար այլևս ոչ դքի, խտր չեն դներ ոչ իսլամի և ոչ քրիստոնեայի միջև. կը սպաննեն, կը կողոպտեն, կը թալան ամէնքն ալ:

1900-ի ամռան Վանի թիւրքեր հազարէ աւելի ստորագրութեամբ հանրագիր մը ջրկեցին Բ. Դուռը համիդիէներու դէմ. իրենց պատասխանեցաւ. «Ուրիշ անգամ չենք ուզեր լսել անոնց դէմ ուէ բողբոք», և խնդիրը երեւութապէս փակեցաւ:

Այս տարի մարտ 28-ին, Դուրպան-պայրամի երրորդ օրը, Արձէշի նշանաւոր թիւրքերէն Հաճի Հասան աղան Արձէշէն կէս ժամ հեռու Չալապի-տաղ գիւղը իր բարեկամներու այցելութեան կերթալ: Այգիի մը մէջ նստած ատենին, յանկարծ 4 քիւրդեր (զորս Հաճի Հասան աղա կը ճանչնայ իբրեւ Էմին փաշայի մարդիկ) կը յարձակին անոնց վրայ: Ցասնէն աւելի նշանաւոր թիւրքեր և ժողաներ, որ Հաճիի քով նստած կը լինին, կը փախչին. միայն Հաճին և իր ծառան կը մնան Բաւական հրացանաձգութենէ վերջ Հաճին ազդրէն կը վերաւորի: Հաճին Արձէշ վերադառնալով միւսնոյն ժամանակ Վան, Երզնկա (միւշիքին) և Բ. Դուռը կը հեռագրէ: Երկրորդ օրը թէ Արձէշի և թէ շրջակայ գիւղերու նշանաւոր թիւրքեր, Ջաւար էֆէնտիի տունը գումարելով 50 ստորագրութեամբ հանրագրութիւն մը կը պատրաստեն, Բ. Դուռը ուղղւած, որով կը պահանջեն կամ անմիջական գոհացում և ապագայ ապահովութիւն և կամ գաղթելու բաց ճանապարհ մը: Իսկ Էմին փաշայ խնդիրը այլափոխելով՝ Բէօռ Հիւսէին փաշայի հետ միացած՝ միւշի Զէքի փաշայի կը տեղեկացնեն՝ թէ ատոնք համիդիէներ չսիրողներ են և համիդիէներու վարկը կոտ:

քելու համար է իրենց այդ արարքը: Յուզումը բաւական երկար տեւեց, մինչև ապրիլ 7: Հայդարանցի աշիրէթի պետերէն համագիտեցի միւրալայ (գնդապետ) Հիւսէին փաշայ, Թէմուր փաշայ և Էմին փաշայ՝ նկատելով, որ խնդիրը պիտի ծանրանայ, վերոյիշեալ օրը Արճէշ գումարելով, Հաճի Հասան աղայի հետ կը հաշտուին, և այսպիսով խնդիրը անգամ մըն ալ կը փակուի: Որովհետև անցեալ տարի ալ սոյն Հաճի Հասան աղան՝ միացած թիւրքերու և հայերու հետ՝ բողոքեց Էմին փաշայի դէմ և կարգ մը տաճիկ զինուորներու Էմին փաշայի խօլամներու ձեռքով սպաննուիլը հաստատելով՝ յաջողեցաւ բանտարկել տալ զինք—թէ և վերջինիս ազգական և ցեղակից Հիւսէին փաշայ միջնորդելով Հայաստանի դահիճ Զէքիի քով՝ շուտով ազատեց բանտէն, — ուստի այս անգամ վրէժ մը լուծելու համար էր Հաճիի դէպքը:

Մայիսի մէջ Վանի Համիդիէ գաւառակի նշանաւոր թիւրքեր և քիւրդեր թիւրքերէն խնդրագիր մը տւած են Վանի ռուս հիւպատոսին, որուն թարգմանութիւնը հետեւեալն է.

Վանի կուսակալութեան մէջ գտնուող
Բարձր. Ռուս շիւպատոսին
Տէր,

«Համիդիէ գաւառիս մէջ գտնուող ժողովուրդս բաւական ժամանակներէ իվեր տեղս հաստատուած համիդիէ գունդէն դժգոհ ենք: Այս գունդէն Շէմշիկ աշիրէթի պետ Սատուն բէկ և իր եղբայր Հասան աղա ամէն օր մեր գիւղերը կը թալեն և կ'աւերեն: Այս պատճառաւ այն աստիճանի հասած ենք, որ օրապահիկէ մը իսկ գուրկ ենք: Ներկայ ամսոյս քսան երկուքին, ժամը հինգին, յիշեալ աշիրէթի պետին գրգռութեամբ իր եղբայրը Հասան աղա երեք հարիւր հեծեալ և հետեակ համիդիէներով, ամէնքն ալ կանոնաւորապէս մարթիններով զինուած, գաւառիս պատուաւորներէն Մախսուտ աղայի տղան Մահմէդը սպաննեցին օր ցերեկով ու հրապարակաւ, ինչպէս նաև երեք ձիեր, իւրաքանչիւրը 100 ոսկի արժողութեամբ. քեցին տարին նախիրը, որ 300 տաւարներէ աւելի կը լինէր, և ոչխարների հօտը, որ հազարի չափ էր: Մեր կառավարութիւնը ոչ կը հարցնէ, ոչ կը փնտռէ և ոչ իսկ մեզ տերութիւն կ'ընէ: Այս պատճառով թշուառ տառապեալներս արդարութիւնը Ռուսաց Շահնշահին քով կը փնտռենք: Համիդիէ գաւառը ուրիշ երկու գաւառներով, որոնք հարիւր հազարէն աւելի բնակիչ կը պարունակեն, կը դիմենք յիշեալ Շահնշահի հիւպատոսին, որ եթէ մեր ներկայ թշուառ վիճակի մէջ մեզ օգնելու, մեր վրայ հսկելու և մեզի այս թշուառութենէն և անձուկ վիճակէն ազատելու կամք յայտնէ, ամէնքս ալ անոր դրօշի տակ կը մտնենք և հպատակ կը դառնանք: Ա' ճարեքնիս հատած և ապրելէ ձանձրացած՝ Շահնշահի բարձրապատիւ հիւպատոսին կը դիմենք ու կը խնդրենք մեզ իր հպատակութեան տակ առնել: Այս մասին հրամանը ձերն է:

Ստորագրած են Համիդիէ գաւառի պատուաւորներէն՝
Մուսթաֆա բէկի տղան Թէլլի բէկ. Մուհամմէտ. — Համիդ. Պիքրի Դպրահիմ. — Դպրահիմ. — Թարաւան աղա —
Մախսուտ գատէ Իսմայիլ. — Ռուշատ բէկ:

14 յուլիս, 1901

Օրերս քիւրդերու մէջ բաւականէն աւելի աւարառութիւններ և ընդհարումներ կան:

Աղայի Սօր և կիրակցի Շաքիր աղա՝ միրանցի Մուսթաֆայ փաշայի հօտերէն 10,000-էն աւելի ոչխար կը յափշտակեն: Զօրք գնացած է իրենց դէմ *):

Ապաղայի դաշտը հայտարանցի նատըր բէկ և Պարսկաստանի հպատակ Մուսթաֆայ բէկ ընդհարում ունեցած են. սպանւած են երկու քիւրդ:

Ատամցիներու և հայտարանցի հիւսէին ու Էմին փաշաներու միջև ընդհարում եղաւ Արճէշէն երկու ժամ հեռու: Մայիսի մէջ երեք ատամցի սպանւած են: Թըշնամութիւնը կը շարունակուի:

Ք Ր Դ Ա Կ Ա Ն Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ Ն Ե Ր

(ՆԱՄԱՍ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԷՆ)

26 յունիս

Ըս թ ու է-Ը դ ք է ր անուն կիրճին մէջ թւէս 5-6 օր առաջ ընդհարում մը տեղի ունեցաւ Միրան աշիրէթին հրամանատար համիդիէ Մուսթաֆա փաշային և Շէրնախի ցեղապետ Աղայէ Սօր Մէհմէդ աղայի միջև: Մուսթաֆա փաշայի մարդերէն սպաննւած են 15 այր ու կին մը և 9,500 չորքոտանի (ոչխար, ջորի, այծ) յափշտակուած են, իսկ Մէհմէդ աղան մարդու կամ նիւթական ունէ վնաս չէ կրած: Այս ընդհարումները գրեթէ անախտ բացառութեան ամէն տարի կը պատահին և կը տեւեն 5-10 օր: Եւ ամէն տարի ալ Սղերդէն, Բաղէշէն զօրք կը ղրկուի կուրի առաջըր առնելու կամ աւելի ճիշդը՝ կողմնակցական ոգով Մուսթաֆա փաշայի շահերը պաշտպանելու համար. որովհետև Աղայէ Սօր միշտ հակառակադարական ու հակահամիդական գտնւած է և 20-30 երկար տարիներու ընթացքին մէջ իր կալածական տուրքէն ու տասանորդէն (էօջը) փարա մը իսկ չէ վճարած: Այս տարի ալ երկու վաշտ զօրք ղրկուած էր երկու հակառակորդները հաշտեցնելու և խաղաղութիւն հաստատելու համար, սակայն ձեռք առնւած միջոցներն ու սպառնալիքները այս տարի ապարդիւն մնալու դատապարտեցան:

24 յուլիս

Պէտիրխան փաշայի թոռներէն երեք անձ, որոնց գլխաւորն է Մէհմէտ պէկ՝ Պոսթան գաւառի Շախէ-Հաւլար գիւղը քաշած՝ լուկ-միջիկ հողագործութեամբ իրենց ապրուստը կը հայթայթէին, ողբալով միանգամայն իրենց փառաւոր անցեալին վրայ: Սակայն վերջերս չկրնալով հանդուրժել Միրանցի Մուսթաֆա փաշային և իր աշիրէթին անլուր կեղեքումներուն, զլուր վերցուցած՝ ապստամբական նոր շարժում մը ստեղծելու և իրենց անցեալ փառքին տիրանալու իրական ճիգեր կ'ընեն: Համիդիէ գունդերն ու Պիթլիսի և Տիարպէ-քիրի կուսակալութիւնները, մեծ կարեւորութիւն տալով այս նշանաւոր գերդաստանի վնասակար զարթունման, իրար անցած են: Խնդրին հետեւեալէն ահաբեկած՝ սուար թւով զօրք կը համախմբեն ճիգրէի և Պոսթանի գաւառները:

Եթէ Մէհմէդ պէկ նիւթական օժանդակութիւն և բարոյական աջակցութիւն գտնէ, քաղաքական մեծ յեղաշրջում մը կրնայ առաջ բերել երկրին մէջ...

*) Տես Տրգրանակերտի նամակը:

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍՂԵՐԴ ԳԱՒԱՌԻ

Ազգաբնակչությունը. — Սովորական զբաղումները. — Հունձքերը. — Տուրքերը և անոնց գանձումը. — Ծրթեկեղծեան պայմանները. — Բաղաբական բանտարկեալներ:

Ս Ղ Ե Ր Դ քաղաք այժմ ունի 350 տուն հայ (աւելի քան 2,000 անձ), 150 տուն քրիստոնեայ տարբեր հասարակութիւններ (կաթօղիկ-քաղդէացի, ասորի, կաթօղիկ-ասորի, բողոքական) և 4,000 տուն տաճիկ (20-25,000 անձ):

Տիրող լեզուն՝ արաբերէն: Վարժարանի շնորհիւ մեր նոր երիտասարդութիւնը հայերէն կը խօսի: Բնակիչք առհասարակ տգէտ և անուս: Ցածկները՝ բարբարոս և կրօնամոլ:

Սղերդի միւթէսարիֆութիւնը բաժնւած է չորս գայ-մագամութեանց.

Է Ր Ո Ւ Հ. Գայմագամը առաջ կը նստէր Էրուհ տաճիկ գիւղը (ուստի է գայմագամութեան անունը), բայց մօտ 20 տարիէ ի վեր, սկզբունքով, կը նստի Տ Է Հ հայա-բնակ գիւղն, որ այժմ ունի 250 տուն զուտ հայ (2,000 անձի մօտ) ու 10-20 գաղթական և պաշտօնեայ տաճիկ: Հայերը ազնիւ շաւեր կը գործեն և ճիշդ փարաւոններու ժամանակակից հրէից կեանքն կապրին: Էրուհի ամբողջ բնակչութիւնը 5,000 կը կարծւի: Հայերը 350 տուն (3,000 անձի մօտ) 21 գիւղի մէջ տաճիկներու հետ խառն կը բնակին: Տիրող լեզուն քիւրդերէն է:

Ղ ա Ր զ ա ն. Գայմագամը կը նստի 2 ո գ գիւղը, որ ունի 20 տուն հայ, 15 տուն ասորի և 40 տուն քիւրդ: 2 ո գի հայերուն կեանքն ալ յար և նման է տէհէցի-ներու կեանքին: Ամբողջ գաւառն ունի 3,500 բնակիչ (կարծեօք), որոնց 530 տունը (3,000-ի մօտ անձ) հայ են 51 գիւղի մէջ ցրւած, տաճիկներու հետ խառն: Կը խօսին քիւրդերէն:

Շ ի Ր ւ ա ն. Գայմագամը կը նստի Ք ի ւ Փ Ր է, որ ունի 5 տուն հայ, 15 տուն ասորի և 50 տուն տաճիկ: Ամբողջ գաւառն ունի 3,000 բնակիչ: Հայերը կը կազմեն 140 տուն (1,000 անձի մօտ) 11 գիւղերու մէջ ցրւած և կը խօսին աղճատ և աղկաղկ հայերէն մը:

Պ Է Ր Վ ա Ր. Գայմագամը կը նստի Խ ա ս խ է Ր գիւղը, որ ունի 25 տուն հայ և 130 տուն քիւրդ: Գաւառին բնակչութեան թիւն է 2,100 անձ, որոց 280 տունը հայ են (1,500 անձ գրեթէ) տաճիկներու հետ 11 գիւղի մէջ ցրւած: Կը խօսին աղաւաղ և կորճային հայե-րէն մը:

Առաջները հայք յորժ ստեարաթիւ էին, բայց ժամա-նակի ընթացքին մէջ, իրենց վրայ եղած ճնշումներէն ու բռնութիւններէն՝ ցրւած, կրօնափոխ եղած և իրենց գիւղերն ու կալածներն քիւրդերու ձգած են:

Եկեղեցիներէն մաս մը, մզկիթի և ախոռի վերածւած, քիւրդերու ձեռքը կը գտնւին:

Քիւրդ-խալաֆներու ճիշդ թիւը յայտնի չէ, որովհետեւ ցարդ տեղական իշխանութիւնը չէ յաջողած անոնց մարդահամարը կազմել տալ:

Համագումար հայաբնակ գիւղերը կրնանք հաշուել 100, տուն՝ 1,600, անձ՝ 10,000-ի մօտ:

Սղերդի հայերը կը պարապին երկաթագոր-ծութեամբ, կօշկակարութեամբ, ոսկերչութեամբ, բրու-տութեամբ, սեկագործութեամբ, հիւսնութեամբ և մանր

առեւտրով: Իսկ վաճառականութիւնն, որմնագործութիւնն, պղնձագործութիւնն և խաղախորդութիւնն տաճկաց ձեռքն են: 1895-ի դէպքերէն ի վեր հայ վաճառականները գրեթէ փերեզակ դարձած են, և տաճիկ փերեզակները՝ առաջին կարգի վաճառական:

Հայ գիւղացիները մեծաւ մասամբ հողագործութեամբ կը զբաղին, ցանցառ թւով արհեստաւորներ ալ կան: Իսկ քիւրդ գիւղացիներուն զբաղումն է՝ մասամբ հողագոր-ծութիւն, դուարարութիւն, և ընդհանուրին՝ գողութիւն, աւազակութիւն, բռնութիւն, աւարառութիւն, ցե-ղային կռիւներ և ըն:

Հայք՝ թէ և մեծ մասամբ արհեստաւոր, բայց նիւթա-պէս շատ խեղճ վիճակ մ'ունին, որովհետեւ տարապար-հակ (անկարիէ) յանձնարարութեանց և աշխատու-թեանց ներքեւ ընկճւած կըստ են. իրենց ձեռաւրեստներն ընդհանրապէս առանց փոխարինութեան, ձրի կը յափըշ-տակին ձեռքերէն: Կառավարութիւնը անկարեկիր կը գտնւի ամէն տեսակ բողոքներու:

Ինչպէս անցեալ այնպէս ալ այս տարւան հ ու ն ձ-ք երբ շատ յաջող և բազմարդիւն եղած են. կատա-րեալ աժնութիւն և առատութիւն կը տիրէ: Այլիւրին լիտրը (6 սխա) 4 դահիկան կը ծախուի և աւելի աժան-նալու հակամէտ է: Այս տարի մեր ամբողջ գաւառը, նամանաւանդ Սղերդ քաղաքը, չարաչար կը նեղւի ջրի նւազութենէն:

Հայոց ցանքերն 90⁰/₀ կը փճանան ու կը յափըշ-տակին կառավարութեան, աշիրէթներու և ոստիկան-ներու կողմանէ՝ գաղտնի և յայտնի: Հայ գիւղացին, արիւն-քրտինք թափելով հանդերձ, միշտ նօթի, միշտ մերկ ու պարտական է, և այդ վիճակին ուղիղ հետեանքն կը լայ յաճախադէպ կրօնափոխութիւնը (խալաֆանին), հայրենի օճախին լքումն ու հեռանալը:

Ծանօթ են արդէն Թիւրքիոյ պետական տ ու ռ բ երբ— զինւորական (ասկէրիէ), արհեստաւորական (թէմէթ-թիւ), կալածական տասանորդ (էօքը), որ հիմա եօթն-երորդ եղած է, և ուրիշ բացառիկ տուրքեր: Ասոնց իւրաքանչիւրին կ'ընկերանան նաև կրթականի, զին-ւորական բարեփոխութեան և այլ մասնաւոր բաժիններ ալ: Եւ այս բոլոր տուրքերուն վրայ 1900 տարւոնէ սկսեալ՝ 6⁰/₀ յաւելումով եղած է, նոյնպէս զինւորական պէտքերու համար (թէճհիգաթը ասկէրիէ):

Առհասարակ բոլոր տուրքերը՝ անգուծ, անիրաւ, ան-խիղճ միջոցներով կը գանձուին. մահու չափ ծեծ, խոշտան-գում, ճեմիշներու մէջ բանտարկութիւն, հայհոյութիւն, ա-նարգանք տրոց հաւաքման ներքին կանոնադրիւ կը կազմեն:

Զ ի ն ո ռ ա կ ա ն տ ու ռ ք.— Կառավարութիւնը չճանչ-նար աղքատ, հարուստ, պանդխտութեամբ ծննդավայրէն հեռացած, մեռած, ծերացած. իւր կէտ նպատակին է ամբողջ բռնն ներկաներէն գանձել հրէշային խստու-թեամբ, անողորմաբար. ոչինչ կը լսէ, դրամ, մի՛շտ դրամ:

Թ է մ է թ թ իւ.— Շատ ծանր. հացակարօտ արհես-տաւորին վրայ 40-60-100-150 դահիկան բռնաւորած էն: Հակառակ պետական հրամանին՝ գեղացի հայ հողագործներու մեծագոյն մասէն կը գանձեն այս տուրքը: Հայ գեղացիք իրենց տուրքերը վճարելու հա-մար գարունին սկիզբէն իրենց ցանքերը կանաչ կը ծա-խին գրեթէ միշտ:

ԽճՈՒՂԵԱԳՈՒՐՔ.—Անձ գլուխ 12 ղըշ. տուրք կը հաւաքէի տարեկան խճուղեաց շինութեան համար 16-18 տարիներէ իվեր, մինչդեռ տակաւին արդիւնք մը տեսած չունինք աչքովնիս: Այս տարի ալ ջրհորներ բանալ տալու համար կառավարութիւնը հանգանակութիւն մը բացած է ի Սըերգ և 3,000 դահեկանի մօտ նոր տուրք մը ծանրացուցած է մեր ազգայնոց վրայ, սակայն ջրհորի պատուակին տակ ժողովուրդը պաշտօնապէս կողոպտելու, կեղեքելու հնարամիտ ձև մ'է ատիկայ պարզապէս:

Երթեկեկութեան պայմանները օրէօր աւելի կը դժուարանան: Երկաթուղի, խճուղի բնաւ չունի մեր գաւառը. ապրանք փոխադրութիւնք գրաստներու միջոցաւ կը կատարուին: Ճամբաներու մէջ արիւն կը հոտի. կեանքի, ինչքի ապահովութիւն չկայ բնաւ, նամանաւանդ հայերու համար, որոնք կաշկանդուած, բանտաւաճի և պաշարուածի կեանք ունենալով, չեն կրնար իրենց տեղերէն դուրս ելնել և ապրուստ մը որոնել: Իհարկէ ստիպեալ ճամբորդող հայերը մէկ կամ աւելի տաճիկ կ'ընկերացնեն իրենց՝ դրամական վարձքով մը. իսկ Պօլիս կամ նոյնիսկ ուրիշ նահանգներ ճամբորդել իսպառ արգիւլուած է: Անցագիր բնաւ չեն տար, իսկ երբեմն ծանօթ անձներուն կուտան շատ նեղութեամբ, ձգձգումով ու դրամական փնտսով, և ան ալ ուրիշ նահանգի մը համար միայն. Պօլիս երբէք: Այս արգելքը միայն հայերու համար է, ուրիշ քրիստոնեայ ազգերու անհատներուն համար չէ:

Համիդի յէ զօրագուններուն շահատակութիւններն որոնց արձագանքը մինչև Եւրօպա և նոյնիսկ Աստուծոյ աթոռը հասած ըլլալու է, զանց կընենք յիշատակելի զի անոնք, թագաւորին զաւակներն ըլլալով, առանձնաշնորհեալի հանգամանքն ունին...

Այս տարի իբր քաղաքական բան տար կ'է ալ մէկ հոգի ունինք, Յակոբ Փանոսեան անուն, որ երրորդ անգամ բանտարկուած ըլլալով՝ այսօր շատ դժնդակ կացութեան ու չարալըուկ խստութեանց նշաւակ եղած է: Ահա իւր այս վերջին բանտարկութեան պարագաները համառօտիս:

1. 95-ի դէպքերէն առաջ Յակոբի եղբայրը, Պէշիրօ, 13,000 ղուրուշի արժողութեամբ գիւղերու տասանորդ վառնէ կառավարութեանէն (երկու եղբայրներն, Յակոբ և Պէշիրօ, ունին գիւղ մը, Կիւլէլտէրէ անուն. իրենց միակ զբաղումը հողակալածնին շահագործել և տասանորդ առնել է ամէն տարի): Տասանորդի արգիւնքն եղող հացարոյսերն այնինչ հաւաքած ու ամբարած էին, դէպքերը վրայ հասնելով՝ իրենց ամբողջ ունեցածին հետ տասանորդի հասոյթն ալ կը կողոպտուի և դէպքէն մի քանի օր ետք երկու եղբայրներն ալ քաղաքական յանցանքով կը բանտարկուին ամբողջ մէկ տարի: Արձակուելէն անմիջապէս յետոյ կառավարութիւնը նոյն 13,000 ղուրուշը պահանջեց խստութեամբ: «Մեր ամբողջ ունեցածին հետ տասանորդի հասոյթն ալ կողոպտուի զնաց և այսօր մենք հացի կարօտ ենք», պատասխանեցին եղբայրները: Անողոր կառավարութիւնն, ամէն տեսակ արդարացի առարկութեանց չ'անսալով, մի քանի անգամ հաճի (գրաւ) տակ առաւ խեղճերուն հազար դժուարութեամբ և անլուր տոկոսներով հայթայթած

սերմնացու հացարոյսերն ու լծկան կենդանիները և արժէքին $\frac{1}{4}$ -ով ծախելով՝ գանձեց այն 13,000 ղուրուշը մինչև այս անցեալ դեկտեմբերի սկիզբները: Յակոբն ալ իսպառ յուսահատելով՝ ինքզինքն գինեմոյութեան կուտայ: Եւ երբ կիւրակէ առտու մը, 1900 թ. նոյ. 19, գինով վիճակի մը մէջ տեղւոյս փօլիս տալիս է ն կը կանչէի գործով մը, յժամանակ չունիմ, յետոյ կուգամ, կը պատասխանէ: Փօլիսի վարչութիւնն կատարած, փրփրած՝ մի քանի ոստիկաններու միջոցաւ բեր անարգանքով և գինով վիճակի մէջ՝ շալկելով կը տանին զինք, որ իրենց տմարդութիւնն ու կողոպտութիւնն պախարակել յանդգնելուն պատճառաւ՝ իբր «հայհոյիջ թագաւորին և մարգարէին» կ'ամբաստանուի սուտ վկաներով և կը բանտարկուի:

Եւր խնդիրը Բաղէշ իսթիւնաֆի (վերաբնութիւն) ընելուն համար՝ տարւոյս մայիսէն իվեր ամենախիստ ճնշումներու ու չարչարանքներու ենթարկուած է. բացարձակապէս արգիւլուած է իրեն հետ տեսնելի և որ աւելի սոսկալին է՝ իրեն կերակուր տանիլ. սովամահ ընել կ'ուզեն: Եւ որովհետեւ թիւրքերէն լաւ կը խօսի ու կը գրէ, ոտքերն ու ձեռքերն ալ ծանր շղթաներով կապած ու պրկած են, որ ինքնապաշտպանութեան համար բան չգրէ. մէկ խօսքով՝ խեղճին կեանքը վտանգի տակ է:

Մայիս 8-ին բանտապետ Թահիր աղան Յակոբին եղբայրը Պէշիրօն կանչելով՝ իսթիւնաֆի (վերաբնութիւն) ատենանի է վրա գնելը (պաշտօնաթղթերը) կը պահանջէ խստիւ, որպէս զի զանոնք յետաձգելով՝ իսթիւնաֆի օրինական պայմանաժամը վերջացնել տան, հոս դատելու և դատապարտելու չար դիտումով: Եւ երբ այս վերջինը չ'յանձնէր էվրագներն, անգութ բանտապետը մահու չափ ծեծել և խոշտանգել կուտայ խեղճ Պէշիրօն, որուն բողբոջները դարձեալ «ձայն բարբառոյ յանապատի» մնացին...

Կ Ե Ն Ս Ա Ք Ր Ա Կ Ա Ն

Ս Ե Ր Ո Ր-Ա Ղ Ք Ի Ի Ր

(Շարունակ. — Տես № 5)

Բարչէնի կռիւը կամ ճիշդը՝ ճակատամարտը, բոլոր մը անվիհերներու և ռազմաւոր բանակի մը միջև, Սիրորի համբաւին թեւեր տաւ և անոր անունը պատկառելի ըրաւ: Պատերազմի ասպարէզին վրայ, ուր քաջերու սահմանը զէնքն է, հայ ֆէդայիները, մէկ նահատակ միայն զոհելով, ոլորմուր ճամբաներէ մօթ գիշերով թշնամուն յուսահատ պատնէշները կանցնէին ու հպարտօրէն կը լսէին քրդերուն բարկ և սրտնեղ խօսակցութիւնը. «Ով որ ամսական կառնէ, թող ան երթայ մեռնի թագաւորին համար»:

Թիւրքերը, որոնք ամբողջ օրը հազիւ 12 ձեռք թընդանօթ արձակած էին, կը կարծէին, թէ ափ մը քաջերը կուռ և անխելի շղթայի մը մէջ առած՝ իրենց ճանկերուն տակ են:

Առտուն, երբ լուսը բացուեցաւ, թիւրքերը ամօթահար և ափիբերան մնացին, երբ տեսան որ բլուրը պարպեր է. թռչունները թռեր էին վանդակէն: Այդ օրէն Սերոր թիւրք հասարակութեան համար դարձաւ Սերոր փաշա: Սակայն Տարօնի հերոսը ատելով կ'ատէր ազ

անունը. «Ի՞նչ կ'ըսէր, մենք փաշաներուն ու աղաներուն դէմ կը կռւինք, այժմ ես փաշայ ըլլամ»...

Այդ անմահ կռւէն ետքը, զգալով որ անհնար է այդ դէպքէն ձեռք ձգել, որ բոլոր օսմանեան հրամանատարներուն պատիւը կը ջախջախէր, ինչպէս նաև իր դիրքը կը վտանգէր, Բաշէշի վալին պատգամաւոր խրկեց անոր, հարցնելով թէ ի՞նչ է ուզածը, և երկրորդ՝ մասնաւոր տեսակցութիւն մը կը խնդրէր անկէ:

Սերոբի պատասխանը լակոնական եղաւ, ինչպէս վայել է իրեն պէս ամէհի զինւորի մը. «Թողէք մեզ որ հանգիստ ապրինք»: Իսկ տեսակցութիւնը մերժեց:

Օսմանեան կառավարութեան ակտաւով գոռոզութիւնը չի կրցաւ տանիլ սակայն 2,000 զինւորի և բաշխօգուծներու այդ չարաչար պարտութիւնը: Իր բարբարոսութեան և անգթութեան կատաղը թափեց Սերոբի տան վրայ, աւարի տալով անոր բոլոր հարստութիւնը, ոչխար, տաւար, ձերբակալեց Սերոբի մեծ եղբայրը Մխէն, որ անլուր տանջանքներ կրելէն յետոյ կրցաւ փախչիլ բանտէն. ձերբակալեցին Մխէի կինը Տատօն, որ ազատեցաւ թէև, բայց վրան տաղած սպիներով ծածկւած, իսկ Սօսէն և Սերոբի եղբայրը Ջաքար փախան Սասուն, ապաստանեցան իրենց ամուսնոյն և եղբոր քով այնպէս որ խնայեց մեծ և արիական տունը, ցիրուցան եղած, գնաց Սասունի անմատչելի սարերուն վրայ, անոնց մենաւոր լուծեանը մէջ, իր գոյութիւնը շարունակելու առիւծին սրտոտ պաշտպանութեանը տակ:

Օջախի այս բարբառութեան ետքը, Սերոբ հիանալի անձնուրացութիւնով և հոգիի օրինակելի բարձրութիւնով մը կ'ըսէր ընկերներուն. «Պէտք է բախտաւորները երբեմն լան, որ թշուառները մխիթարին: Տեսէք, կ'ըսէր, մեր տունը ձեզի օրինակ. ես նախ մեր տունը, Ախլաթի խէչի մեծ օջախը, քանդեցի, որ շատ մայրեր իրաւունք չունենան զիս անիծելու ըսելով. «մեր տունը քանդողին տունը քանդուի»: Իսկապէս, այդ մեծ ընտանիքը Սերոբի գործունէութեան մէջ բոլորովին օտար չմնաց:

Սասունի անարատ սարերուն մէջ, ուր հովերը դեռ չէին ապականւած դաւաճանութեան շունչով, կառավարութիւնը գտաւ անպիտան մատնիչ մը, գեղաշէնցի Աւէն, որու ձեռքով յաջողեցաւ թունաւորել Սերոբը, այնպէս որ անմահ հերոսը, բոլորովին ուժէ ինկած, տեղէն չէր կրնար շարժիլ:

Թունաւորման յաջորդ օրը, կանուխ լուսաբացին, Բաշէշէն և Մուշէն զօրքերու անթիւ բազմութիւն մը, Բշարի խալիլ աղայի առաջնորդութիւնով, եկաւ Կէլիէկուզան և պաշարեց Սերոբի և իր ընկերներուն բնակած տունը: Հայդուկները (իր հետ ութ հայդուկներ ունէր այն ատեն) Սերոբի թևերը մտած հագիւ կրցան անոր մարմինը գեղէն դուրս հանելը Առիւծը, որուն ոտքերուն տակ կը թնդային Մուշի դաշտերը ու սարերը, ուժկարողութենէ զոված էր. անսիրտ Դալիլա մը մկրատած էր անոր ազնիւ ու հոյակապ կեանքի թելերը: Անմոռանալի հերոսը, այդ վիճակին մէջ իսկ, ուզեց կռուիլ և սուղ ծախել իր կեանքը ռճագործ և նամէրդ թշնամիին: Վարժես յոգնած և ուժատ, խնդրեց իր հաւատարիմ հայդուկներէն որ զինքը մօտակայ քարի մը առջև տանին—«Իրէք զիս սա քարին առաջ, իմ վերջին օրն է, և ջանացէք դուք գէթ ձեր կեանքը ապաստել միայն բարով»...

Երբ տարին իր ուղած տեղը նստեցոսցին, հրացանը

իր ուժասպառ ձեռքերուն մէջ բռնած, խորունկ ու ծանր հառաչանք մը թռաւ բերնէն, որ կարող էր սարսաղանք բոլոր Սասնոյ լեռները:

Իր անմահ կինը Սօսէն, անոր մօտը կեցած, իբր վահան կը պաշտպանէր զայն: Սերոբ չկրցաւ ոչ մէկ գնդակ ուղղել թշնամուն. իր պղնձէ բազուկները թուլեցած էին: Ոտքէն վիրաւոր և մահամերձ վիճակի մէջ էր, երբ թշնամին խուժեց դժբախտ հերոսին վրայ, որ դեռ կը շնչէր. կտրեցին անոր ազնիւ ու խրոխտ գլուխը և նահատակեցին անոր երկու հարազատ եղբայրները Մխէն, Ջաքարը և զաւակը Յակոբ. Սօսին, որ արցունքի հեղեղներ կը թափէր իր սիրելիներու դիւցադնացած մարմիններու վրայ, հեռացուցին: Չորս հայդուկներ միայն կռւելով ընդան կատարը բարձրացան. թշնամին, իր գլխաւոր նպատակին հասած, այլևս չհետապնդեց զանոնք:

Սերոբի նահատակութեան օրը սպաննեցան նաև Կէլիէկուզանի Տէր Քաջ քահանան և ուրիշ քանի մը երիտասարդներ: Կէլիէկուզան, յանկարծակիի գալով, ցիրուցան եղաւ: Սասունցիք, մասնաւորապէս Կէլիէկուզանցիք, լեռնական ժողովուրդ, անգամ մը որ կռուիլ սկսին, ալ ետ չեն քաշուի, իսկ որ փախան, ալ ետ չեն դառնար:

Թիւրքերը տօն կատարեցին ու մեծ հանդէսներով, ցնծութիւններով ահաւոր հերոսին գլուխը, Սօսին ալ հետեւին, Մուշ տարին իրենց քաջագործութեան իբր յաղթանշան, անկէց ալ տարին Բաշէշ. Քիչ յետոյ Սօսէն ազատեցաւ բանտէն, իսկ Մխէի կինը, քաջասիրտ Տատօն, այդ սև ու մահու ընկալին, Սերոբի երկամեայ որդին փախցնելով՝ ազատեց: Այդ նա մէկ րոտ սպանութեան վրայ, ուր փայլեցաւ թիւրքերու ցածհոգիութիւնը, սուլթան Համիդ, Երլըզլի աղտոտ շագալը, շքանշաններով վարձատրեց անարգ դաւաճանութեան հեղինակները:

Վրէժ է.— Քանի մը ամիսներ անցած՝ հայդուկները գիշեր մը մտան դաւաճան Աւէի տունը, ուր պատահամբ կը գտնէր նաև իր մեղսակից եղբայրը: Մոմերը վառած սկսան հարցաքննել. Աւէն անկապ խօսքեր կը թափթփէր բերնէն. դաւաճանութեան մասնակից քանի մը հայերու անունները տալէն ետք՝ լեզուն կապւեցաւ: Երեսուն գնդակի հարւածներ մաղմաղ ըրին անոր մարմինը, վիրաւորեցին անոր որդին և սպաննեցին մեղսակից եղբայրը: Ժողովուրդի սրտին համապատասխան այդ արդար և ճշմարտապէս հայրենասիրական վրէժը երկինք ու երկիր ուրախացուց:

Սերոբի գերեզմանին վրայ զոհեցին նաև Բշարի խալիլ աղան, Սասունի կոտորածի ժամանակ առաջին դեր խաղացողը, Սպաղանքի կոտորածին հերոսը և Սերոբի վրայ յարձակող ուժին առաջնորդը: Բոլոր Սասունը ա՛խ կը քաշէր անոր ձեռքէն, որուն կուրծքը սուլթան Համիդ պատւանշաններու տակ խեղդած էր: Աշնան, իբր Մուշ եկած էր—այս մարդը քայլ չէր փոխեր որ հայերուն դժբախտութիւն մը չպատահէր — հայդուկները առիթ համարեցին այդ գազանին արիւնը խմել: Երեսուն հոգիէ բաղկացած հայդուկային խումբը, Անդրանիկի — որ իրեն նշանաբան ընտրած է չինայիլ թշնամուն—Սպաղանքի գիւղապետ Մակարի և Սեդրակի առաջնորդութեամբ, բռնեցին հրէշը Մառնիկ և Հաւատորիկ գիւղերուն մօտ իր ութ ոստիկաններով և երեք հայ ծառաներով, որոնք աղային իբր գրաստ կը ծառայէին անոր գոյքերը կրելով:

Խալիլ աղան ուզեց փախչիլ վրիժառու գնդակը հասաւ ու անոր ձին գլորեց. աղան հետիոտն ճողոպրիլ ուզեց, հայդուկները հասան ետեւէն. երբ բռնեցին, արդէն լեզուն կապւած էր: Գործած բոլոր ոճիրները, գազանութիւնները, քնորէնութիւնները անոր երեսին տալէն ետք, առին պատւանշանները, շանսատակ ըրին տեղնուտեղը և գլուխն ալ կտրելով՝ շարունակեցին իրենց ճամբան:

Սերոր թէ անհատական մարդ և թէ հանրային գործիչ անվախ և անբասիր եղած է: Անոր մէջ կը գտնենք ասպետական քծեր ու յոյզեր, որոնք դասական վեհութիւն մը ունին: Ունեցած է շատ մաքուր և վճիտ կեանք մը, որուն էջերուն մէջ կարող ենք մեր ազգային նկարագրին համար հպարտութեան պատգամներ գտնել:

Զարբաշ ու տոկուն, ազնական հոգիով մը լեցւած, զինքը ճանչցողներուն ու շրջապատողներուն վրայ ունեցաւ բարոյական մշտափայլ հեղինակութիւն: Իր թափառիկ, այլ ներուած կեանքը անոր մէջ պողպատէ կամք մը գամած էին. բոլոր իր ազդեցութիւնը և աշխրջութիւնը գործ կը գնէր որ իր ընկերները մնան ճշմարիտ անձնւորութեան տիպարներ, մաքուր, անշահախնդիր և ընդունակ գաղափարի զոհողութեան. այդ ոգով կը լիւթէր ու քարոզէր: Փառաքանեց հրացանի սէրը, ինքը՝ եօթ տարւայ թափառ կեանքին մէջ, մէկ օր չբաժնեցաւ իր մօսինէն, որուն հետ գրկախառն կը ննջէր, աղւոր սիրուհիի մը պէս: Իր ընկերները, անոր անողոր կարգապահութենէն ոչ միայն դժգոհ չէին, այլ անոր մէջ կը կարգային եղբայրական և բարի գորովի մը ճառագայթումը. կը սիրէին զայն, կը հիանային անոր վրայ, որ իրեն նշանաբան ընտրած էր «զէնք, մահ կամ ազատութիւն»:

Գերազանցօրէն գործի մարդն էր. եթէ կարող ըլլար հայութեան բթամիտ հարստութիւնը գնահատել հայ արիւնին այդ վսեմացումը, խորիտ պոռթկումը, եթէ հայ մեծատունը անգամ մը գոնէ ցոյց տար հայրենասիրական խոյանքը կամ ճիգ մ'ընէր բարձրանալու իր գետնամած դրութենէն, հայ ազգը տարբեր ճակատագիր կ'ունենար: Սերորը կարող էր ըլլալ «Ժողովուրդները ետեւէն քաշող» մը: Ստրկութիւնը մեր բարոյական մեծ զգացումներու զսպանակը փշրած է:

Բարի, վեհանձն, կտրիճ և միանգամայն զւարճասէր, այս վերջինը աղը ըլլալով այդ տեսակ արկածալից կեանքերուն:

Իր ընկերներէն մէկը կը պատմէ. «Տ. գիւղին մօտ տասնեակեց ընկերներով նստած էինք այրի մը մէջ և կըսպասէինք Սերորի գալուն որ մեզի պատուէրներ տալով ճամբու գնէր: Թէյ եփած և ոչխար մը խորոված, երբ կը պատրաստէինք ուտելու, յանկարծ պահապանը լուր բերաւ թէ Աղբիւրը կուգայ: Այրի ծակէն առիւծի պէս ներս մտաւ Սերորը. — Բարե՛ք ձեզ, տղէք ջան, ըսաւ, եթէ յաջողութիւնով ետ դառնաք, մէկի տեղ հինգ ոչխար խորոված կը կերցնեմ ձեզի: — Եթէ փոքր վնասով դառնանք հապա՞, հարցրեց ընկերներէն մէկը. — Այն ատեն երեք օր ծովու աղի ջուր կը խմցնեմ ձեզի»:

Այս զւարճախօսութեան միջոցին լուր հասաւ որ գիւղը 60 զօրք եկած է եօթ թնդանօթով: Բոպէ չ'անցած, Սերոր մարդ զոհեց գիւղը, որպէս զի քննէ անցած դարձածը և դառնալով քարայրի բնակիչներուն — «Տղէք, կը տեսնէք, ի՞նչ ուրախ ճամբորդութիւն է որ կ'ընէք:

Մինչև անգամ եօթ թնդանօթ և 60 մարդ ուղարկեցին ձեզ ճամբու գնելու համար»: — «Աղբիւր ջան, միթէ պզտիկ մարդիկ ենք մենք քու աչքին. եթէ հիւք ում է թը իմանայ մեր տեղը, հազարաւոր զօրք կ'ուղարկէ մեզ դիմաւորելու», պատասխանեց զւարթ ֆէդայիներէն մէկը:

Այս համառօտ և թերի կենսագրութիւնը, Սերորի յիշատակին, որուն օտարներն իսկ իրենց հիացումը յայտնած են, բաւական չենք գտնել: Կ'արժէ որ աւելի լայն և մանրամասնօրէն հաւաքել իր երկրին մէջ անոր կեանքի և գործունէութեան բոլոր կէտերը, որոնք պիտի կազմեն շատ շահեկան կենսագրութիւն մը, մեր յեղափոխութեան պատմութեան մէջ հերոսական տաք, կենսախայտ ու ազգային անձնասիրութիւնը գգուող էջեր աւելցնելով:

Անոր անդուլ և անյուսահատ գործունէութիւնը արիւնոտ, այլ խիզախ ու փառաւոր հետքեր ձգեց եկող սերունդին, մասնաւորապէս Տարօնի մէջ:

Սերոր խիզախներու դպրոցի մը հիմնադիրն եղաւ և ունեցաւ իր արիասիրտ հետեւողները՝ Անդրանիկներ, Արթիւններ, Գէորգներ, Մակարներ, Համբարձումներ և ընդ որոնք կը շարունակեն Արածանիի փիերուն վրայ իրենց վարպետին կիսատ ձգած հայրենի ազատագրութեան մեծ գործը, աւելի ամեհի և վրիժառու թափով մը, որոնց անձնէր կորովին և եռանդին առջև մեզի կը մնայ հրճւիլ ու շարժիլ:

Տարօնը, մեծ Վահաններու այդ աշխարհը, ուր Հայաստանի ոսկեդարուն լուսաւորիչները ու «պանծալի» թարգմանիչները հայոց աշխարհի յուսմի քունը և հին փառքը կը ննջեն, ո՞վ կրնայ ըսել, թէ իր կուրծքին տակ չի սնուցաներ չարագործ բռնաւորներու գահը դողացնող առիւծ տղամարդեր:

Նէմրուտի հսկային գերեզմանին առջև ազգային հպարտութիւնով մը կրնանք այսօր արար աշխարհի կրկնել Շէյքսպիրի խօսքը առաքինի և ազնիւ Բրուտոսի դիակին վրայ.

The was a man!

Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

* * *

Կ. Պօլսոյ 1896-ի պատմական ցոյցի տարեդարձին տութիւ «Պրօ Արմէնիայի» № 19-ի մէջ հրատարակւած է «Մասնակից» ստորագրութեամբ յօդւած մը, ուր ամփոփ կերպով նկարագրւած է Բանկ-Օտտօմանի գրաւումն ու Սամաթիայի հերոսական կռիւը:

Նոյն թւին մէջ կը գտնուի Ժ. Դօրիսի մէկ հետաքրքրաշարժ նամակը, ուր «Արդիւլ Համիդ ներքին» գրքին իրազեկ հեղինակը նոր գաղտնիք մըն ալ երևան կը հանէ սուլթանի համաշխարհային դեր մը կատարելու իսկ մեծամուլութիւնը ապացուցանող: Զօրավար Բուլանժէի օրով, որ պետական հարւածով մը ֆրանսական միապետութիւնը վերականգնել կուզէր՝ Արդիւլ Համիդ իր առաջին սենեկապետ Հաճը Ալի բէյին միջոցով՝ հեռագրած է Փարիզի իր ամենէն անձնէր գործակալներէն մէկուն, որ ինք պատրաստ է զօրավարին տրամադրութեան տակ գնելու կարենոր գումար մը այդ գործին համար:

№ 20-ի «Կիսամեակին» մէջ Պ. Գիյառ կը բար

ցատրէ մեծ տագնապը Արդիւ Համիդին, որ այս պահուսնին ինքզինքը ամէն կողմէ սպառնալիքներով շրջապատուած կը տեսնէ: Մակեդոնիայի, Եւթէնի, Հիւսիսային մէջ ապրտամբութիւնը երթալով կը ծաւալի, նահանգներու և միջին իսկ մայրաքաղաքին մէջ մօտալուտ խռովութիւններու նշաններ կը տեսնուին: Համիդի սարսափը արնշափ մեծ է, որ մինչև անգամ պալատ հրաւիրած է Օրմանեան պատրիարքը, խնդրելու որ իր ժողովուրդը խաղաղութեան յորդորէ:

«Եթէ երբէք պատրիարքը—կ'ըսէ «Պրօ Արմէնիայի» խմբագրականը—իրեն չվայլող թուլութեամբ մը իր ժողովուրդին առջև դահիճին ի նպատակ միջնորդելու խոստումը տայ, ժողովուրդը չափիտի լսէ զինքը, ինչպէս հոգը չըրաւ այն անաթեմաներուն համար, զորս 96-ին արձակեց հիւսնալի իզմիրեանին յաջորդող տեղապահ խայտառակ Բարթուղիմէոսը»:

Եւ ցոյց տալու համար որ հայ ժողովուրդը, հակառակ զինքը շրջապատող ամենաանպատակ պայմաններուն, զուրկ չէ ինքնապաշտպանութեան ու վրէժխնդրութեան առաքինութիւններէն, Պ. Բիլառ իր տեսութիւնը կը վերջացնէ թարգմանելով «Դրօշակէն» Մուշի վերջին տերօրներու նկարագրութիւնը:

«Պրօ Արմէնիայի» վերոյիշեալ երկու թիւերը կը պարունակեն նաեւ ընդարձակ թղթակցութիւններ՝ Երզնկայէն, Մուշէն, Վանէն, Բաթումէն, Աթէնքէն, բոլորն ալ լաւատեղեակ աղբիւրներէ ստացած:

Եւրօպական և մանաւանդ Ֆրանսական մամուլը կը շարունակէ մինչև այսօր նմանը չտեսնուած եռանդով մը արծարծել հայկական հարցը: Տեղի նւագութեան պատճառով մենք ստիպուած ենք յիշել հոս միայն ամենէն կարեւորները:

Temps սեպտեմբեր 14 թիւն մէջ հրատարակեց առաջնորդող յօդուած մը, որ զայրոյթով մը մատնանիշ կ'ընէ Հայաստանի արդի կացութեան ամբողջ ահաւորութիւնը և այն բոլոր չարագուշակ նշանները, որոնք 95-ի զարհուրելի աղէտներուն կրկնութիւնը կը սպառնան:

«Բ. Դուռն ու պալատը, հաւատարիմ, աշխարհի չափ հին, իրենց հնաքին, ծիգ կը թափեն հանրային կարծիքը հանդարտեցնելու, երկու անհատներու միջև պատահած աննշան կռիւի մը զոնք տալով Սասնոյ վերջին դէպքերուն... Բայց ո՛չ եւրօպական դահլիճները, ո՛չ հասարակական կարծիքը պիտի չխաբւին այս անգամ: Դեռ մօտաւոր անցեալի մը փորձը մէջտեղ է՝ սորվեցնելու համար թէ ի՞նչ արժէք պէտք է տալ սուլթանի և իր հաւատարիմներու բողոքներուն... Արդէն վաղուց է որ լուրջ նախազգուշացումներ կը լսին»:

Յօդուածագիրը կը յիշէ «Հայկական հարցը համաշխարհային խաղաղութեան տեսակէտէն» բրօշուրը, որ Գլասկովի խաղաղութեան համաժողովին առթիւ ցրեցաւ բոլոր կարեւոր թերթերուն ու անձնաւորութիւններուն, և «Պրօ Արմէնիան», որու համար կ'ըսէ.

«Պրօ Արմէնիայի» թղթակցութիւնները, որոնք ականատես վկաններէ կը բղխին, որոնք մարտիրոս ժողովուրդի մը երկարատեւ վշտին աղաղակներուն պէս են, չեն դադրած պարագայական բազմաթիւ մանրամասնութիւններով, պերճալիս միօրինակութեամբ մը, նկարագրելէ անհաւասար մեծամարտի մը անցուղաքները»:

Յօդուածագիրը կը շեշտէ ներկայ ժամին հանդիսաւորութիւնը և կը վերջացնէ պարտք դնելով եւրօպական պետութիւններու վրայ, որ շուտափոյթ միջամտութեամբ մը վերջ դնեն այս դժոխային կացութեան ու մարդկային խղճմանը փրկեն ահաւոր պատասխանատուութեան մը կրկնութենէն:

Նիկօլա Բ. ցարին Ֆրանսա այցելութեան առթիւ, Ֆրանսական Ահադեմիայի անդամ և մեծահռչակ պատմագէտ Էրնէստ Լամիս «Կայսերական երկրորդ այցելութիւնը» վերնագրով յօդուած մը գրած է Revue de Paris-ին մէջ: Լուրջ տեսութիւն մը ընելով Ֆրանկո-ուս նիզակակցութեան մասին՝ յօդուածագիրը կ'ըսէ.

«Որպէս զի Ֆրանսան և Ռուսիան բոլոր հարցերու մէջէն քով քովի քալեն, փոխադարձ զինուորներ ու զոհողութիւններ հարկաւոր են: Վերջին տարիներու դիւանագիտական պատմութիւնը դեռ շատ անճշորէն ծանօթած է, այնպէս որ կարելի չէ դատել Ֆրանկո-ուսական նիզակակցութեան դերը ընդհանուր գործերու մէջ: Բայց կը թւի թէ ան քաղաքացիական շափ կարեւոր չէ եղած: Քորօրինակ, Կրէտէի գործին քարեյաջող լուծումը, կղզիին գրեթէ ազատագրութիւնը, որ անշուշտ անոր հելլենական հայրենիքին նեո միացումը կը պատրաստէ — Ֆրանսայի և Ռուսիոյ օսմանեան տիրապետութեան տակ գտնուող քրիստոնեայ երկիրներու նկատմամբ ունեցած աւանդական մեծնոգի քաղաքականութեան համապատասխան այդ արարքը այս երկու պետութիւններու առանձնակի գործը չեղաւ:

«Միւս կողմէն այս «Հանդէսին» մէջ մենք արդէն յայտնած ենք այն զգացումը թէ զոհողութիւններու քաժիքը շատ մեծ եղաւ Ֆրանսայի համար Արեւելքի տխուր գործերուն մէջ, Հայաստանի շարժերուն քացած ծգնաժամին առնմ: Այս հրաժարումը թէ՛ քրիստոնեայ Ֆրանսային և թէ՛ յեղափոխական Ֆրանսային պատկանող մեր ամենէն ազնիւ աւանդութիւններէն և մեր շահերուն այս լքումը, շատ մեծ սխալ մը թւեցաւ մեզի: Այս կրկնակի զինուոր հանդէպ հայերը շարունակող սուլթանին և հանդէպ Ռուսիոյ, որու կառավարութիւնը այն առնմ կը թւէր թէ չէր շահագրգռուր կոտորածներով, այնչափ տարօրինակ էր, որ ունէ թաքուն մտածումով մը միայն կրնայ մեկնել: Այն առնմները, երբ Ֆրանկո-ուս նիզակակցութիւնը շոնդով մը երեւան հանդէպ, կարծես թէ աշխարհը վեր վերցնելու կարող լծակ մը նկատեցին զայն: Մեծ երազը փարատեցաւ, աւա՛ղ: Վտանգաւոր կամ՝ գէթ վաղահաս էր համաձայնութեան սկզբնական ու իրական իմաստը այսպէս ընդլայնել: Ուրիշ բան մը չհասցանք ատկէ, բայց եթէ թողնել որ լայնայն Հայաստանի արհմտոտ արատը, ի վնաս մեր պատւին ու մեր շահերուն»:

«Պրօ Արմէնիայի» խմբագրական մասնախումբին անդամ հռչակաւոր Ժ. Կլէմանսօ «Հայկական հարցը» վերնագրով յօդուած մը հրատարակած է իր շաբաթաթերթ Bloc-ի թիւ 35-ին մէջ: Արտատպելով «Պրօ Արմէնիայէն» Մուշի և Վանի նամակները՝ հետեւեալ խորհրդածութիւնը կ'ընէ՝ Բիլառի միջոցով «Դաշնակցութեան» Գիւլասէին ըրած դիմումին մասին.

«Այս անգամ Եւրօպան նախազգուշացած է: Ան պատրաստի մը սուներն իսկ չափիտի ունենայ թափած արեւան պատասխանատուութենէն խուսափելու համար: Բայց ան հոգը կ'ընէ»:

Կը տեսնեմ որ 1894-ին լուծին պահող կիսապաշտօնական մամուլը զայրանալու ձեւեր կ'առնէ այսօր, եւ կը կարդամ թէ Դիւկասէն ունեւորութիւն տւած է «Պրօ Արմէնիայի» քաջարի տնօրէն Պիէռ Բիլառին:

Մեր նախարարը արդէն վաղուց գիտէր ինչ որ Բիլառը կրնար ըսել Դիւկասէին: Որովհետեւ հայերուն խնդրածը միայն ա է պարզապէս, որ Եւրօպան կատարէ վերջապէս իր սեփական խոստումները, եւ իր խօսքին յարգանքը հարկադրէ սուլթանին: Ա՛՛՛ գործադրութիւնն է երեք տէրութիւններու կողմէ մշակւած եւ 1895 մայիս 11-ին սուլթանին ներկայացւած քրիստոնեաներու ծրագրին, միայն քանի մը նոր երաշխաւորութիւններու յաւելումով, որոնք կարեւորութիւնը ապացուցւած է Սասունին յաջորդող կոտորածներով, որոնք դեռ տեղի ունեցած չէին այս ծրագրին խմբագրութեան միջոցին: Եւ այն ժամանակ պետութիւններու կողմէ այս ծրագիրը նկատուած էր իբրեւ թիւրքայէն պահանջելիք միջոցով...:

Ահա թէ ինչ պիտի ըսէր Բիլառը Դիւկասէին, եթէ հարկ լինէր: Եւ ես կուզեմ հաւատալ թէ պ. Դիւկասէ հասկցած է որ ղրդւած կամ պարզապէս քաջալերւած այդպիսի այցելութիւն մը յանձնառութեան մը հաւասար է եւ հետեւաբար պէտք է շարժի:

Կուզեմ հաւատալ թէ ան անյապաղ պիտի համաձայնի

պետութիւններու հետ, սուլթանին քարծրացած քաղաքը կեցնելու եւ ապագային գայի շրջապելու համար: Կուգեմ հաւատալ թէ ան հետաքննած է՝ թէ ինչ պիտի ընէ մեր դաշնակիցը եւ թէ կոմս Լամսդորֆ ալ միեւնոյն տեսակէտէ՛ն կը դիտէ Հայաստանի գործերը, ինչ որ իր նախորդը Լօքանօֆ, որ Ուրֆայի եկեղեցիին երեսը հազար զոհերուն մէջ ուրիշ բան չէր տեսներ, քայքայեթէ՛ն, աննշան դէպք մը:

Որովհետեւ եթէ ուրիշ կերպ լինի, եթէ Քիյառին ուղղւած կողմ ուրիշ նպատակ չունենայ, քայքայեթէ՛ն սուլթանին վրայ ծնշեւ, անկէ Լօքանօֆի դրամը կորցնելու համար, որչափ թուք ու մուր ալ թափենք, քիչ պիտի գայ այս անարգ գործին:

Temps իր սեպտ. 28 թիւին մէջ դարձեալ խմբագրական մը կը նւիրէ մեր դատին: — Բ. Դուռը ինքն ալ կուգայ խոստովանելու Հայաստանի վիլայէթներուն կացութեան ծանրութիւնը, ծանուցանելով պետութիւններուն՝ թէ քննիչ յանձնաժողով մը կազմած է: Միաժողութիւն պիտի լինի սակայն մեծ կարեւորութիւն մը ընծայել այս ձեռնարկին: 1895-ին պաշտօնավարող այս կարգի յանձնաժողովներուն պատմութիւնը կը վկայէ, որ անոնք ոչ թէ ճշմարտութիւնը երեւան հանելու նպատակ ունին, այլ հասարակաց կարծիքը մոլորեցնելու եւ խղճմտանքները քնացնելու ձեւակերպութիւններ են լոկ: Նոյնիսկ այս պահուս մինչդեռ սուլթանը ասգին ուղղատեսութեան ապացոյց մը կուգէ տալ Եւրօպային, անդին Մուշի օսմանեան իշխանութիւնները անհաւատարի արգելքներ կը յարուցանեն վանի ռուսական հիւպատոս Ումանկիի դէմ, որ քննութեան համար Մուշ ղրկած էր վերջերս, եւ Պիթիւի վալին ամբրիկացի միսիօնարի մը կ'արգիլէ նահանգին մէջ ճամբորդել: պաշարման վիճակ հաստատւած է Մուշի մէջ եւ մինչեւ իսկ նամակները կը բռնուին: Այս փաստերու թուումէն յետոյ յօդաճառքի մը կը շարունակէ:

«Եւրօպան իր անտարբերութիւնը, իր անգործութիւնը, իր զրէթէ մոնասկոթիւնը արդարացնելու համար, երբեմն իր տգիտութեանը մէջ մեղմացուցիչ պարագաներ փնտռեց: Ժամանակին նախազգուշացած լինելով, ան չպիտի կրնայ այլեւս նմանօրինակ արդարացումներ մէջ բերել:

Ամէն բան կիմացնէ իրեն այն ծանրակշիռ դէպքերը, որոնց թատր կըսկսի դառնալ Հայաստանը:

Գործակալութիւնները, միմաւաւնը այն օրէն, երբ հայաստանի նիւնիթէն անհամաձայն նւագ ծանր շահերէ ծնած անհամաձայնութիւն մը Փրանսայի ու սուլթանի միջեւ յարաբերութիւնները ընդհատեց, աչքերինն բացած են չարիքի ախտանիշներուն եւ կըստանան հեռագիրներ, որոնց մէջէն որոշ չափով մը կը պտուղկայ ամբողջ ժողովուրդի մը ողբերգական տագնապը: Բայց եւ այնպէս այս տեղեկութիւնները շատ անկատար են, շատ անբաւական, երբեմն կարելի է կասկածիլ թէ շատ քիչ են գտնած:

Տեղեկութիւններու ուրիշ աղբիւրներ մատչելի էին մեզի: Սըր-բազան դատի մը արի ախոյեանները «Պրօ Արմէնիայի» մէջ, այնքան ծոխառատ իր թղթակցութիւններով, իր նկարագրի ու վաւերական նամակներու քաղաքներով, եւ «Դրօշակի» մէջ, քաջարի օրգանը կուսակցութեան մը, որ գիտէ թէ ինչ կուգէ եւ որ կամենալ ու գործել գիտէ օրէ օր մեզի բերին ճշգրիտ, դրական մանրամասնութիւններ Սասունի, Ալեյուտի, խոռվայոյզ գաւառներու խառնակութիւններուն մասին...

... Ճշմարտութիւնը այն է, որ նոյնիսկ առաւել կամ նւագ վախիտամտածած դէպքերէն դուրս, որոնք ամէն րոպէ սպաւորութեան ու տանջանքի նոց սիկլօն մը կրնան փրկեցնել այս դժբախտ գաւառներուն մէջ, Հայաստանի կացութիւնը պիտի մնայ գերազանցօրէն անկայուն ու անհանդուրժելի, որչափ ատեն որ պետութիւնները չհասկանան վերջապէս Բերլինի դաշնագիրը գործադրելու պէտքը...

... Այսօր պետութիւնները տեսակ մը պայմանաժամ ունին, վերջին ժամանակամիջոց մը իրենց առջեւ՝ իրենց սիւալին այս արդիւնքը խափանելու համար: Ամբողջ Արեւելքի մէջ ժողովուրդները, որ հակառակ այնքան յուսախաբութիւններու՝ չեն կորսնցուցած դարաւոր սովորութիւնը Փրանսային նայելու, ինչպէս մարդ աչքերը կը դարձնէ դէպի գերագոյն ապաւել մը, կը յուսան թէ վերջին ցոյցերը մտերմութեան մը, որ միջազգային

հաւասարակշռութիւնը կ'երաշխաւորէ, արդիւնք պիտի ունենան յանուն երկու բարեկամ ու դաշնակից պետութիւններու լի ու կատարեալ համաձայնութեան, գործելու սուլթանին վրայ ծնշում մը, առանց որու այս իշխանը բան մը չպիտի ընէ Հայաստանի մէջ՝ նոր պայթումի մը առաջը առնելու համար:

Եւ դիւանագիտութիւնը չկրնար աչքէ վրիպեցնել, որ կոտորածները, որոնց առջեւ մարդկային խղճմտանքը վերջիվերջոյ պիտի ապստամբի, կրնան ծնիլ այն տեսակ փոխվրէժներ, որոնցմով ամէն բանէ առաջ կըզգաղի իրաւաւոր պոլիտիկոսները քիչ մը հետեւակ խոհեմութիւնը:

La Paix թերթի սեպտ. 17 թիւին մէջ կը գտնենք Ժան Մէրակի մէկ յօդաճառք «Հայաստանին համար» վերնագրով, ուրկէ հետեւեալ կտորը կը թարգմանենք.

«Մարդկային երեսով ծիւղող տեսնենք մարդկային երես ունի՝ գիտնալով թէ ինչ պղտորանական ազդարարութիւններ եղան իրեն իր վերջին խողխողումներէն յետոյ, Թիբեւ շատ իրաւամբ կ'ենթադրէ թէ պիտի թոյլ տան իրեն միեւնոյն տեսակի ֆանտէզիներ, առանց ամենափոքր բողոքի: Եւրօպային կ'իյնայ կասեցնել անոր մարդասպան ծեղքը եւ երբ ան գիտնայ թէ ինչ վտանգի կ'ենթարկէ ինքզինք վերսկսելով այն, ինչ որ շատ հեշտութեամբ ներեցին իրեն, տարակոյս չի կայ որ ետ պիտի քաշի վատը: Վայրկեան մը իսկ պէտք չէ կորսնցնել ամէն յապաղում կրնայ յառաջ բերել աղէտի մը պայթումը, որու պատասխանատուութիւնը ծգծողներուն վրայ պիտի իյնայ: Եթէ կարելի չէ դեռ Թիբեցիոյ անկումին վճիռը արձակել եւ անոր լիկիւնասիօնը բանալ, ապահովութիւնը, գոր ան կը վրդովէ իր տիրոջ վայրենի վարմունքին երեսէն, կը պահանջէ զգուշական միջոցներ, որոնց պէտք է գործակցին կառավարութիւն անունին արժանի բոլոր պետութիւնները:

Բըզանսօնի Dépêche Républicaine լրագիրը իր սեպտ. 21-ի թիւով սուլթանի ծննդեան 59-րդ տարեդարձին առթիւ, «Դիւանագէտ մը» ստորագրութեամբ, հակիրճ մէկ տեսութիւնը կ'ընէ անոր կեանքին եւ հետեւեալ տխուր տողերով կը փակէ այդ տխուր մարդուն կենսագրութիւնը.

«Իր անքուն գիշերներուն մէջ ամէն տեղ դաշոյնը կը տեսնէ: Ինքզինքը կը բանտարկէ իր պալատին մէջ ինչպէս բանտի մը մէջ: Մարդոց այս թշնամին բոլոր մարդիկը իրեն թշնամի ունի: Ազդուութիւններու խնթութիւնը դանդաղօրէն թափանցած է այս լաւ հաւասարակշռած ուղեղին մէջ: Արդիւ չամիղը բուրժուա մը, բանտար մը դարձուցէք, թողուցէք իրեն զինք շրջապատող բոլոր սարսափները, անշուշտ չպիտի կրնար ապրիլ ընկերութեան մէջ, ինքնասպան պիտի լինէր: Արդիւ չամիղ անոր համար միայն կը շարունակէ ապրիլ, որովհետեւ կարելիութիւն ունի ինքզինքը գրեթէ բոլորովին մեկուսացնելու կենդանի մարդերէն: Մարդ պիտի ուզէր չէ՞ ծանշնալ այն բոլոր խորհրդագրաշունքները, զորս այս խաւար հոգին իր մէջ կը ծածկէ, ամբողջովին գուշակել այս մարդը, որ արիւնոտ ծամբէ մը իր կայսրութիւնը դէպի վերջնական աղէտը կը քաշեցնէ:

Բերլինի National Zeitung-ի սեպտեմբեր 27 թիւով հրատարակած «Կացութիւնը Արեւելքի մէջ» ընդարձակ յօդաճառքն՝

«Թիւրք ծնունդաւ շրջանակներու մէջ յաճախ կը լսի, — եթէ կ'ըսի թէ՛ Եւրօպան քրիստոնեաներուն է, պէտք է նաեւ ըսի՝ Անատոլուն մահմէդականներուն է: Հայկական կոտորածները թիւրք կառավարող դասակարգներու մտածողութեան այս ընթացքէն ծագում առած են, որովհետեւ հայերը միակ քրիստոնեաներն են, որոնք Փոքր-Ասիայի ներսերը հոծ գանգաւաններով կը ընակին: Եւ Պօլսոյ մէջ ոչ միայն Անատոլիի քրիստոնեաները կարելի եղածին չափ մէկտեղ ընելու ծիգ կը թափեն, այլեւ կ'ուզեն աւելի բարձր չափով ներքին միատեսակութիւն մը առաջ բերել Անատոլիի ընակչութեան մէջ...»

Սեպտեմբեր ամսւայ ընթացքում «Դրօշակի» խմբագրութիւնը ունեցաւ, իրարից անկախ, երեք թանկագին

Հիւրեր — «Պրո-Արմէնիայի» խմբագրապետ Պիէռ Բիսպոն, «Պրո-Արմէնիայի» խմբագրական կոմիտէի անդամ ու Temps լրագրի բաղադրական բաժինը խմբագրող Ֆրանսիս Դը Պրէսանսէին և Aurore-ի խմբագիրներին՝ պ. Ուրբէն Գոհիէին, որը ժընէվով անցնելիս կանգ էր առել միայն կարճատեւ այցելութեան համար:

Ժընէվի հայ գաղութը պատեց պպ. Բիրաոն և Պրէսանսէին առանձին հացկերոյթներով:

Թ Ե Ր Թ Օ Ն

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ո Յ

Ա Պ Ր Ի Լ Ե Ա Ն Ց Ե Ղ Ս Փ Ո Ւ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

(ՀԱՄԱՆԻՆԴՆԻԱՄԵԱՅ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՆԷ)

(Վերջ. — 865 ՊՊ 4)

Սակայն գառնանք երկրորդ յեղափոխական շրջանի (միլիտայէի) մէջ տեղի ունեցած նախընթաց քանի մը դէպքերուն:

Ֆիլիպպէի կոմիտէի անդամներէն խիստ Պրակօյի յատկապէս Բիսպոն կը զրկուի յեղափոխութիւնը պատրաստելու: Որոշւած օրը Բիսպոնի յեղափոխականները կը պատրաստուին եւ գիւղի բոլորտիքը ամուր գիրքեր կը շինեն: Սկզբում ասոնց վրայ անկանոն վոճակներ կը խուժեն, բայց ապրիլ 26-ին զօրքերու խիտ շարքերը չ'ուշացան երեւոյթու: Կիները, տղաքները ու զէնքով կուելու բոլոր անկարողները Բօքրիվչիցա ուղարկւած էին: Բիսպոնի յեղափոխականները քաջութեամբ կը դիմադրեն զօրքին ալ, բայց երբ գիւղը կը հրդեհուի եւ միւս կողմէն ալ կատաղի զօրքը չորս կողմէն անսպառ կրակի տարափ կը տեղացնէ, որոշուած կուտան, ամէն զոհողութիւն յանձն առնելով, զօրաց շարքերը ճեղքել, Պալքանը ապաստանել եւ այնտեղէն ալ ուղղակի Բօքրիվչիցա գիւղի Ահադին գոհեր սալով ու գիւղիներու կոյտեր գիւղելով, հազիւ կրնան այդ կրակի շրջանակէն ազատուիլ եւ Բօքրիվչիցա հասնիլ: Ղեկավարներէն գրեթէ ամէնքն ալ — Վօյօլ, Իքօնօմօլ, Պրակօյի, Տրականօլ, Բարաձօլ — անվտանգ կ'ազատուին, իսկ գիւղը Բարձրագոյն Թօսունայէի հրոսակներէն կը կողոպտուի ու հոյ ճարակ կըլլայ:

Ապրիլ 28-ին եւ 29-ին բոլոր ղեկավարները վերջին ժողով մը կ'ունենան: Աս ժողովին Բօքրիվչիցայի ջոշերն ալ կը մասնակցեն, ուր միաբերան կը վճռեն մինչեւ վերջին շունչ գիւղացիւ Բայց ժողովին արձակումէն յետոյ միեւնոյն ջոշերը Հաճի-Լիվանօլի տունը գաղտնի ժողով մը կ'ընեն եւ յեղափոխութեան հետեւանքներուն վրայ կը մտածեն: Զոշերը, որպէս զի իրենց կեանքը վտանգի չ'ենթարկուի եւ իրենց հարստութենէն չ'իւղ մը չ'վաւարի, կը խորհրդածեն ու կ'որոշեն Ֆիլիպպէի միւթէ-սարիֆին եւ Հաֆիզ փաշային նամակ գրել, որը դեռ Բանակիրիվթէի մօտ կը գտնուէր, եւ իրեն թախանձել որ ժամ առաջ Բօքրիվչիցա հասնի: «Բաղքին մէջ քանի մը սրիկաներ են որ հաւատարիմ ու խաղաղ ժողովուրդը կը գրգռեն եւ ոչ թէ ուսմանը»: Ու կը ինդիկեն փութով զօրք ուղարկել՝ քաղաքը այդ աւաղակներու ձեռքէն ազատելու: Ապրիլ 30-ին գիւղացի մը 30 ոսկիով կը կաշառեն եւ նամակը միւթէսարիֆին ու Հաֆիզ փաշային կ'ուղարկեն: Սակայն ատով ալ չեն բաւականանար: Ոմանց երկիւղ ներշնչելով, ոմանց խոտուածներով գրաւելով, չօրպաճիները (աղաները) գաւաղիքներէն մէկ մասն ալ իրենց կողմը կը քաշեն:

Միեւնոյն օրը խառնամբոխ խուժան մը բռնիչ Սբասօլի ղեկավարներն առաջը Բապլէշքօլի եւ ուրիշ ղեկավարներու ճամբան կը կտրէ եւ կուգէ գանձք ձերբակալել: Ազմուկ ու իրարանցում մը կ'իյնայ: Նոյն այն

ամբողջ օր ապրիլ 20-ին խանդավառ ցնծութեամբ Բապլէշքօլը երկինք կը բարձրացնէր իրեն իր ազատութեան առաքելով, հիմա քանի մը վաշխառուներու ստոր ու ազգադաւ գրգռումներով զայրացած ու կատաղած՝ պատառ-պատառ ընելու մոլեգնութենէն բռնւած էր: Բապլէշքօլ սուրը քաշելով դադանացած խուժանի ժանիքներէն կը պրծնի եւ դեղարանը կապաստանի: Իրեն կը հետեւին Թըրնէվը, Պրակօյի, Վօյօլը, Իքօնօմօլը, Բարաձօլը եւ ուրիշներ, մօտ 40 հոգի: Յեղափոխական ղեկավարները գեղարանը կը մտնան, որպէս զի ալեկոծւած մտքերը հանդարտին եւ եղբայրական կռիւներով անմեղ արեան թափուելուն առաջը առնելու Ղեկավարները կը յորդորեն, կ'աղաչեն որ խուժանը ցրի, սակայն լսող չկայ: Եւ աւելին. խուժանը քանի մը յուսահատ յարձակումներ կը գործէ դեղարանը մտնալու եւ բոլորին ալ կոտորելու, բայց զուռը ներսէն կը փակուի. ան ատեն խուժանի առաջնորդները զուռը ամուր փականքով կը կղպեն եւ անգլուխ մնացած ապստամբները մէկիկ-մէկիկ ձերբակալելու կը ձեռնարկեն ու բոլորին ալ Բալլօլի հիւրանոցը կը բանտարկեն, մերժելով նոյնիսկ ջուր տալ անոնց: Դեղարանը փակւածներէն Կ. Թըրնէվը գնտակահար կուգէ ընել այդ գաւառաններէն մի քանիսին, բայց իր ընկերները թոյլ չեն տար: Խուժանի առաջնորդն էր Բապլէշքօլի հօրեղբայրը՝ Նիկօլա Բապլէշքօլը:

Սոսկ անակնկալ դիպած մը Բօքրիվչիցայի ջոշերուն ծրագիրը խանգարեց: Պօպէքօլ, Մանօլ եւ Խօրօլ, որ ապրիլ 29-ին, Բանակիրիվթէի մէջ թիւրքերու մոլեգնոտ յարձակումներու ժամանակը, 400 հոգիէ բաղկացած արշաւախմբով թիւրք բանակին կոնսկը գործելու նպատակով ելած էին, թրքական սաստիկ ուժի առաջ ցիր ու ցան ըլլալով՝ Բօքրիվչիցա կապաստանին մօտ 50 հայդուկներով, Բապլէշքօլ, գեղարանի լուսամուտէն Պօպէքօլը նշմարելով, ֆրանսերէն լեզուով իրենց բանտարկւած ըլլալը կ'իմացնէ: Պօպէքօլ իսկոյն իր հրոսակներով դաւադիր խուժանը ցրելով կը յաջողի դեղարանի դուռը տապալրով կոտորել, իր ընկերները այդ ամօթալի բանտարկութենէն ազատել եւ 80 հոգիով մայիս 1-ին Պալքանը անցնիլ:

Բօքրիվչիցա իր մէջէն Պուլկարիոյ վերածնունդի եւ յեղափոխութեան նշանաւոր անձնաւորութիւններ ու տաղանդաւոր գործիչներ արտադրած է, որոնք պուլկար ազգի փառք ու պարծանքը կը համարուին: Բայց ազատութեան հանդիսաւոր օրը նա ոտնակոխ ըրաւ իր սրբութիւնները, տալով պատմութեան էջերուն այդ անարգ փաստը...

Բանակիրիվթէի եւ Բիսպոնի շարժումներուն հետ զուգընթացաբար՝ յեղափոխութեան յանկարծակի պայթումէն էլեկտրականացած՝ Պաթաք, Բէրուչիցա ու Պրակի նոյնպէս պարզեցին ապստամբութեան դրօշը:

Պաթաքիները իրենց պատւիրակ Կօրանօլի վերադարձը Օպօրիվթէի ժողովէն խնդուեցան: Գիւղի գլխաւորներէն խորհրդակցական նիստ մը գումարուելով՝ Կօրանօլը գլխաւոր ղեկավար կարգեցին եւ զէնք կրելու ընդունակ մարդիկը, մօտ 1,300 հոգի, զէնքի կանչեցին գնելով գանձք երկու եղբայր Սթէֆան եւ Անկէլ Թրանդաֆիլօֆներու հրամանաւարութեան տակ: Իսկոյն եռանդով ձեռնարկեցին ամբողջութեամբ, պատանէշներ ու գիրքեր կառուցանելու Պաթաքի շրջակայ բոլոր ազգական կէտերու վրայ, որուն մասնակցեցան գիւղի բոլոր բնակիչները, կիները, աղջիկները: ու աղաքները, գիւղեր ու ցորեկ անդու ու յարատեւ աշխատելով:

Ապրիլ 23-ին, Կօրանօլի հրամանաւ, հանդիսաւոր պատարագ ու մաղթանքներ կատարուեցան մեծ ցնծութեամբ, ուր բոլոր հրոսակները ներկայ էին՝ զինուած եւ համազօրութեամբ: Ոգեւորութիւնը բոլոր զէմքերու վրայ կը շողար: Օրիորդներու, հարմներու ու երեսաներու խմբերը հայրենիքի փրկութեան բանակի շուրջը

կը խոնարհէին: Հանդիսաւոր մալթանքէն յետոյ՝ հրո-
թախմբերը, ռազմական երգերով եւ ժողովուրդի խուռն
բազմութեան առաջնորդութեամբ, պային Պաթաքի քուր-
նիւրը իրենց դիրքերը բռնելու:

Ապրիլ 24-ին Պարութու Ահմէդ-աղան, որ լիազօր
խշխանութիւն ունէր սուլթանի կողմէ, երկու զարթիւ-
ներ, Հասան եւ Մուսթաֆա, զրկեց Պաթաք անդիկա-
նալու համար, թէ ինչ շարժառիթներէն զրկեալ պա-
թաքցիները ապստամբած են: Չարթիաներուն զրա-
կան կերպով պատասխանեցին թէ «գիւղը ապստամբու-
թեան գիւմած է կառավարութեան բռնութիւններուն
ու կամայականութիւններուն չհանդուրժելով», եւ որ
«իրենց որոշման մէջ անյողդուզ պիտի մնան մինչեւ արեան
դերջին կաթիլը»: Հապա անոնց անվաւ ճամբայ տ ին-
Քայց Հասանը գիրքերէն հեռանալու միջոցին անարպա-
կան սպառնալիքներ կուղղէ պաթաքցիներուն իմբապետ
Սթէֆանը գնտակահար կրնէ Հասանը: Միւս զարթիւ-
նի փախչի կը փորձէ, բայց նա ալ տեղնուտեղը կը մնայ:
Այս դէպքը կայծակի արագութեամբ տարածեցաւ գիւղին
մէջ եւ նոր հանդէսներու, ոգեւորութեան ու հրա-
ցումի նիւթ տաւ:

Ապրիլ 29-ին, երեկոյեան ժամը 5-ին ատենները,
նշմարեց խառնիճազանճ բաշխուողներու երեւումը
Թ ա շ ա զ ճ ա մ ա յ է ն: Զօրավարը խիստ պատէհնիւր
տաւ: Բոլոր պաշտպանութեան կէտերը զօրացնելու:
Սակայն դժբախտաբար Պաթաք թշնամիի իրապրին
յաջողութեանը շատ նպաստաւոր հանգամանքներ էր ներ-
կայացներ իր ռախարակական դիրքով: Բաշխուող-
ներու վտանակները՝ օգտուելով պուլկար դիրքերու իրարմէ
շատ հեռաւորութենէն, ապրիլ 30-ին մութ գիշեր մը
մօտակայ անտառը կանցնին եւ Բէթթուօ-Պրոսօ կուչած
բլուրի վրայ կամրանան, որը գիւղէն քառորդ ժամ
հեռու է: Իսկոյն իսլամի կարմիր դրօշը իր կիսա-
լուսինով բլուրի վրայ կը ծածանի: Այս բոլորովին ան-
ակնկալ երեւոյթը սարսափի սպաւորութիւն թողուց պա-
թաքցիներուն վրայ:

Ահա այդ աննպաստ արամադրութեան միջոցին բա-
շխուողները վարդէնի աղաղակներով մոլի արշաւանք
մը կրնեն չորս կողմէն պուլկար դիրքերու վրայ: Վեր-
ջինները գիւցադնարար կը գիւմարեն եւ ատեն մը կը
յաջողին ատոնց յարձակումները կասեցնել: Սակայն բա-
շխուողներու անթիւ գունդերու տեսքէն, որ Պեթթուօ-
Պրոսօյէն մինչեւ Սէմրալանի անտառը բռնած էին,
իրենց եռանդը կը լքի եւ ընդհանուր վճատութիւն մը
կը սիրէ: Ղեկավարները կարողն իրենց կառուցած պատ-
նէշները ձգել եւ գիւղի մէջ ապաստանել: Ասիկա
անկարգաբար իր խառնաշփոթութեան ու սոսկումի պատ-
ճառ կըլլայ: Սարսափի ենթակալ ամբողջ այդ դժբախ-
տութիւնը յեղափոխական ղեկավարներուն կը վերադրէ
եւ կուզէ զանոնք պատմել: Կիներու, ծերերու ու պա-
ռաներու լուսանքներն ու անէծքները Կորանօվի պիտին
տարափի պէս կը տեղային: Քանի մը հրացաններ ալ ար-
ձակեցան ուղղակի զայն սպանելու նպատակաւ, բայց
չյաջողեցան: Ամբողջ մոռցած էր իր առջի խանդա-
վառութիւնը եւ այն դափնիները, որով Կորանօվի ճա-
կատը պճնազարդած էր քանի մը օր միայն առաջ...

Ազգեցիկ խմբապետներու միջամտութեամբ հազիւ
կարողացան այդ խառնաշփոթութեան առաջն առնել եւ
հանդարտեցնել ժողովուրդը: Սակայն թիւրքերը, գիւղը
արդէն պաշարելով, սկսած էին հրդեհել ու ուժակոծել:
Պաթաքը իր ինքնապաշտպանութեան բոլոր միջոցները
վատնած էր եւ սրտամորմոք կըսպասէր պատմութեան
մէջ չտեսնած գաղանթութիւններուն:

Կորանօվ, նախատեսելով անկող դրութիւնը, մութ գիշեր
մը իրեն հետ առնելով մօտ 700 կին, մարդ, երեխայ,
կուզէ անխուսափելի վտանգէն զանոնք փրկել եւ կը
յաջողի թիւրք հակող պահնորդներու չղթայէն պրծիլ
ու ապահով վայր մը ապաստանել: Միայն զանոնք մինչեւ
վերջ գիւմարութիւն տալու որոշում կուտան: Մաս մը
եկեղեցին, մաս մը վարժարանը, մաս մ'ալ Պօկսանօվի

տունը գիրք կը բռնեն: Մայիս մէկը երկու կողմէն ալ
անընդհատ հրացանաձգութեան օր էր: Զորս հազարէն
աւելի հրացաններու յարատեւ ճարձատիւնն եւ որսար
գիւղական ձորակը կը զղրդայէր: Դժբախտ գիւղը ամէն
տեղէն հրդեհած էր: Կրակի անողոք բոցերը, իրենց տար-
տարօսեան թեւերը բացած, կը լափէին ամէն ինչ: Բա-
շխուողները նորէն յարձակում մը ըրին, բայց կորուստ-
ներ կրելով՝ յետ քաշեցան: Յուսահատ խարդախու-
թեան ու նենգութեան գիւմարին: Կանչեցին ծերերը եւ
յայտարարեցին որ անձնատուր եղողին վնաս չպիտի
հասցնեն: Պաթաքցիները խաբելով ընդունեցին այդ
«պատուոյ խօսքը» եւ թողուցին որ թիւրքերը գիւղ
մտնան: Խաբեաց թշնամին ալ ասոր կըսպասէր արդէն:
չըջապատելով գիւղը ամէն կողմէն, խուժեցին տուններու,
եկեղեցիի եւ դպրոցի վրայ եւ սկսեցին պղծալի խող-
խողմը ու յօշոտումը:

Վարի գաղանթներու պէս նետուցան հարօտու ու
աղջիկներու վրայ զանոնք կողոպտելու ու բռնաբա-
րելու համար, եւ որպէս զի իրենց վայրագ ցանկու-
թիւններուն բաւարարութիւն տան, բաշխուողները գիւղի
հրապարակի վրայ, ծառի մը լուսին վրայ սկսեցին գլխա-
տել ու մորթել բոլոր հարաներ ու աղջիկները՝
առնալուց մերկացնելով զանոնք ու իրենց վայրագութիւն-
ներուն յագուրդ տալով: Չենք ուզեր այս նախճիրներու
նկարագիրը միտմի գծել: Շատերին ծանօթ են արդէն
Daily News լրագրի թղթակից Մաքկահանի նամակ-
ները, որոնք ամբողջ եւրօպայի զարոյթը հրաւիրեցին Պա-
թաք կատարած արիւնալի ողբերգութիւններուն վրայ:
Այս թղթակիցը, որ կոտորածէն երկու ամիս յետոյ
այցելեց Պաթաքը, զարուրած կը նկարագրէ իր տեսածը:
աղու, աղջկայ ու կնկայ գանկեր, կմախքներ, ոսկոր-
ներ փողոյներու վրայ, եկեղեցին գիւմարելով լեցած,
տունները քանդած, հրապարակը մարդկային մարմիններու
մատաճառանոցի մը քնաւորութիւնը ստացած, 6,000-է
աւելի կին, մարդ, երեխայ մարդկութեան չերեւակայած
տանջանքներով յօշոտած...

Կառավարութեան ջանքերը խողխողումի հետքերը
սրբելու՝ անօրուտ միացել էին: Եւրօպական քննիչ
յանձնաժողովը, որ այդ անուշիկ ոճիրներու կատարումէն
2-3 ամիս յետոյ այցելեց Պաթաքը, մարդկային ճեւ-
ճերացած մարմիններու կոյտերէն սարսափահար մնաց:
Ֆիլիպպեցի հայ մը, որ պատահմամբ այդ միջոցներուն
Պաթաք կը գտնէր, կը պատմէ թէ օղը այնքան ապա-
կանած էր մարդկային մսի ու արեան գողորչիներու
զարչահոտութենէն, որ քննիչները միայն քթիւրին սարի
հոտաւէտ ծաղիկներուն բռնած շարունակած են իրենց
խուզարկութիւնները:

Միեւնոյն բախտին ենթարկեցան Պրացիկ ու Բերու-
չիցան: Պրացիկ, 6 օր գիւմարելով Ֆիլիպպեի բէշերէն
առաջնորդած բաշխուող հրոթախներուն, վերջիվերջոյ
պարտաւորեցաւ անձնատուր ըլլալ: Թիւրքերը անուր
զազանութիւններ գործեցին խեղճ պրացիկցիներուն դէմ:
գրեթէ բոլորը սրէ անցուցին, կիները ու աղջիկները
բռնաբարեցին ու գիւղը թալանելէն վերջը՝ կրակի տալին:

Բէրուչիցան հերոսական անձնագոհութիւններով տան
օր շարունակ կը դիմադրէ թշնամուն, բայց ի վերջոյ՝
կանոնաւոր պաշարման ենթարկելով՝ անձնատուր կըլլայ
ու կ'ենթարկուի թրքական անօրինակ բռնութիւններուն
ու աւերումներուն: Ապստամբութեան պարագլուխ Վաօլ
Բէթլէշօքը, այն պայմանաւ որ գիւղը ազատի կոտա-
րածներէ, յօժարութեամբ անձնատուր կըլլայ զօրքերու
հրամանատար փաշային, բայց թրքական փողոկոտութեան
առաջն անկարող կըլլայ տննել եւ ինքն ալ փաշայի աշ-
քերուն առջեւ խարոյկ կը բարձրացուի:

* *

Այս դէպքերուն ակնհասեա՝ կենդանի մնացած յեղա-
փոխականները սրտամորմոք յիշատակներ կը պատմեն
իրենց կեանքէն: «Ապրիլեան գաւառագէտ շարժումներէն
յետոյ անուր թշնամութեան մատնեալ ժողովուրդը, —

կը պատմէր ծեր հայրուկ մը — ամէն տեղ մեզ կ'ատէր, կը նախատէր ու կը քարկոծէր, եւ մինչեւ իսկ մասնաթիւն կը պիտէր, կարծելով որ ատով իր դժնդակ ցաւերուն ամոքում մը ու վարման մը պիտի գտնէր»։

Յեղափոխական այս տխուր տրամադրութիւնը անխուսափելի երեւոյթ մը եղած է բոլոր սարուկ ազգերու ազատամբական առաջին քայլերուն մէջ, ամէն անգամ որ անյաշող ու բազմազոհ ընդհարումներ ունեցած են բռնութեան դէմ։ Բուլղար ժողովուրդը, այդ արեան նախնիներու ու աղէտներու ժամանակ վհատութեան խելացիոր խայրափութեամբ ու մոլորանքներու մէջ իյնալով, դատապարտելի սրբապղծութեան դիմեց իր արգանդէն ծնած հերոսները այդ դժբախտութիւններուն պատասխանատու ճանչնալով։

Սակայն ամբոյսին այս բոլոր անէծքները օրհնէնքի եւ նախատինքները երախտագիտական զգացումներու փոխեցան, երբ յաջողութիւնը եկաւ վերջապէս պատկերու հայրենի հերոսներու ջանքերն ու զոհողութիւնները եւ միայն աւերակներու ու արիւնի լճերուն վրայ ծածանեցաւ վերջապէս Ազատ Բուլղարիայի դրօշը։

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ X ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՕՆԳՐԵՍԸ

ԳԼԱՍԿՈՎՈՒՄ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ

X-րդ Համաշխարհային կոնգրէսը գումարեց այս տարի սեպտեմբերի 10-13-ին Սկովտիայի Գլասկով քաղաքում, այդտեղ այս տարւայ մայիս 1-ից բացւած միջազգային մեծ ցուցահանդէսի առիթով։ Պատւիրակներ՝ աշխարհի զանազան երկրներից—Անգլիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Աւստրիայից, Զւիցերիայից, Հոլանդիայից, Բելգիայից, Միացեալ Նահանգներից, Քալիֆօրնիայից, Պարսկաստանից, Սպանիայից, Փորթուգալիայից, Նորվեգիայից, Իտալիայից և այլ տեղերից։ Եկել էին մօտ 200 հոգի, իսկ սոսկ անդամների թիւը մօտ 500 էր։

Երեքշաբթի, սեպտեմբ. 10, կոնգրէսի առաջին օրը։

Կոնգրէսի հանգիստաւոր բացումն կայացաւ Ս. Անդրէյ-Բարկլայ Հալլում՝ նախագահութեամբ Գլասկովի լորդ-պրէզիստ (քաղաքապետ) Ս. Չիսօլմի, որ պատւաւոր նախագահ էր կոնգրէսի։ Պատւաւոր փոխ-նախագահներ ընտրւած էին մօտ 150 հոգի—երկրագնդի վրայ գործող զանազան նշանաւոր գիտնականներ, հրապարակախօսներ, քաղաքական գործիչներ, ամէնքն էլ իհարկէ, յայտնի խաղաղասէրներ։ Ռուսաստանի կողմից պատւաւոր փոխ-նախագահ էր յայտնի սօցիոլոգ-խաղաղասէր Նովիկով, Աւստրիայի կողմից՝ Բարոնուհի Սիւտներ, Բելգիայի՝ սենատոր Լա-Փօնտէն, Ֆրանսիայի՝ Ֆ. Պասսի, Գասսոն Մօլ և Նի։

Կոնգրէսի իրական նախագահ ընտրեց գաբտոր Սպինս Վատսոն։

Նախագահի բացման ճառից յետոյ, որով բարի գալուստ էր մաղթում կոնգրէսի անդամներին, ողջոյնի ճառեր արտասանեցին զանազան երկրների ներկայացուցիչները։ Նովիկով, Ռուսաստանի ներկայացուցիչն, այն միտքն յայտնեց, թէ իսկապէս Անգլիայի և Ռուսաստանի, այսինքն անգլիական և ռուսական ազգերի մէջ, չկայ ոչ մի իրական անտաքօնիզմ, և հետեւաբար այդ երկու ազգերը կարող են միանալ՝ լուծելու համար միջազգային մի քանի առկա մնացած հարցեր, որոնք վտանգ են սպառնում համաշխարհային խաղաղութեան։

Մի քանի ներկայացուցիչներ, գովելով հանգերձ սկովտիական ժողովրդի քաջութիւնը և առաքինութիւնը, որ համաձայնել է հիւրընկալել խաղաղութեան կոնգրէսն այն ընդհանր, երբ Անգլիան ամօթալի պատերազմ է մղում, խորին ցաւ յայտնեցին հարաւափրիկեան դէպքերի համար և նշանակեցին անգլիական կառավարութեան դատապարտելի վարմունքը։

Ապա կարգացեց Բէրնի խաղաղութեան միջազգային միայուն բիւրօյի տեղեկագիրը տարւայ նշանաւոր դէպքերի մասին (1 օգոստ. 1900—1 օգոստ. 1901)։ Տեղեկագիրը շօշափում էր ամէնից առաջ երկու առկա մնացած նշանաւոր միջազգային հարց — Տրանսվալի հարցը և հայոց հարցը։ Ահա հայոց հարցին վերաբերեալ կոտորը։

«Տարւայ ընթացքում Թիւրքիայի հայ ժողովրդի տխուր վիճակն ամենեւին չէ թարաբել։ Եւրօպական պետութիւնները դեռ ոչ մի հաւաքական ջանք գործ չգրեցին վերջ դնելու համար այն անգթութիւններին, որոնք գործուում են սիստեմատիքաբար այդ դժբախտ ազգի դէմ։ Միայն Ֆրանսիական կառավարութիւնը իր դիպլոմատիական միջամտութեամբ խափանեց մի կոտորած, որ ծրագրւած էր Այնթափում 1900 թ. գեկտեմբեր ամսւայ համար։ Անլուր խժդութեան, բռնաբարութեան գործեր կատարել են գրեթէ հայաբնակ բոլոր գաւառներում։ Միւս կողմից 40,000 հայ փախստականների հայրենիք վերադառնալու հարցը դեռ չէ լուծւած և նոր խմբական արտաբուսներ էլ են տեղի ունենում։

«Եւրօպական մեծ պետութիւնները մի մեծ ծառայութիւն մատուցած կը լինէին մարդկութեան, եթէ, համաձայն այն հրաւերին, որ նրանց տրեց խաղաղութեան [X համաշխարհային կոնգրէսի կողմից, նրանք յատուկ միջոցներ ձեռք առնէին ստիպելու Թիւրք կառավարութիւնը ընդունել հայոց հարցի արմատական և բացիօնալ լուծումը»։

Այդ առիթով յայտնեց, որ, Բերնի բիւրօյի առաջարկով հայ հրապարակախօս Հ. Առաքելեան, խաղաղութեան կոնգրէսի անդամապատիրակ, կազմել է մի ամփոփ տեղեկագիր հայոց հարցի մասին, որն սույգաբար լինելով տրուում է ամէն մի անդամի և որն բիւրօն յանձնարարում է կոնգրէսի ուշադրութեանը։

Այդպիսով, միայուն բիւրօն կոնգրէսի քննութեան ենթարկում էր իբրեւ այժմէական հարցեր երկուսը — Տրանսվալի և հայոց հարցը, և ապա մօտ քսան զանազան հարցեր՝ վերաբերեալ միջազգային արբիտրաժի և առհասարակ խաղաղութեան։

Կոնգրէսը գտաւ, որ խաղաղութեան համաշխարհային կոնգրէսներն իրաւունք ունեն և պարտաւոր են, իրենց կանոնադրութեան համաձայն, զբաղել միայն միջազգային հարցերի քննութեամբ։ Զբաղել ներքին քաղաքականութեան վերաբերեալ հարցերով կոնգրէսն իրաւունք չունի, հետեւաբար, որքան էլ կոնգրէսը համակրում է բօքսերի դատին, որքան էլ դատապարտում է այդ եղբայրական պատերազմն և անգլիական կառավարութեան վարմունքն, որ յամառում է ընդունել նախագահ Կրիզէրի արբիտրաժի առաջարկը, — բայց նա անկարող է ենթարկել այդ հարցն իր քննութեան։ Այդ պատճառաւ գտնում է, որ քննելի միակ միջազգային հարցն այսօր հանգիստնում է հայոց հարցն։

որն և պէտք է իր քննութեան առաջին գործն անէ, և որոշում է քննել հայոց հարցը երկրորդ օրից, սեպտեմբեր 11-ի նիստում, որպէսզի Այժմեական յանձնաժողովը (*Commission des actualités*), որն պէտք է կանխապէս քննէ այժմեական հարցերը և տեղեկագիր պատրաստէ նրանց մասին, ժամանակ ունենայ պատրաստել տեղեկագիրն և առաջարկել կոնգրէսին քննութեան: Անմիջապէս կոնգրէսը ձեռնարկեց այժմեական կամ *A* կոչւած յանձնաժողովի ընտրութեան, ազգային խմբերի բաժանման միջոցով և քուէարկութեամբ: Այդ յանձնաժողովի համար սովորաբար ընտրւում են ձեռնահաս և այժմեական հարցերի մէջ հեղինակութիւն համարող անձինք: Քուէարկութիւնը ցոյց տուեց, որ այժմեական յանձնաժողովի համար ընտրւել են 7 անդամ, այն է՝ Նովիկով, գոկտօր Բիստէր, գոկտօր Բովէ, արբայ Պիշօ, միս Միդ, Նիւման, գոկտօր Յրիպիէ և Հ. Առաքելեան:

Կոնգրէսը, բուն ծափահարութիւններով ընդունելով այս ընտրութիւնը, փակեց իր նիստը ժամը 1-ին կէս օրից յետոյ:

Երեկոյեան ժամը 4-8 տեղի ունեցաւ *A* յանձնաժողովի նիստը, որն զբաղւեց միայն հայոց հարցով և պատրաստեց իր տեղեկագիրն ու կոնգրէսին առաջարկելի վճռի ծրագիրն:

Երեկոյեան ժամը 8-11 Գլխագովի քաղաքային ինքնավարութիւնը երեկոյթ տուեց ի պատիւ կոնգրէսի անդամներին:

Սեպտեմբ. 11, չորեքշաբթի, կոնգրէսի երկրորդ օրը:

Նիստը բացւեց առաւօտեան ժամը 10-ին: Նախագահում էր պատւարժան գոկտօր Սպինս Վատսոն, որն բանալով նիստը, յայտնեց, որ կոնգրէսի քննութեան առարկան է հայոց հարցն, որի տեղեկագրերն է Այժմեական կամ *A* յանձնաժողովի նախագահ Նովիկով:

Բուն ծափահարութիւնների մէջ ամբօն է բարձրանում պ. Նովիկով: Նա յայտնում է, որ ինքն երկար չի ծանրանայ հայոց հարցի վրայ, ինկատի ունենալով, որ իր բարեկամ հայ հրապարակախօս Հ. Առաքելեան, որ մեծ հմտութիւն ունի այս հարցի մէջ, արդէն պերճախօս կերպով բացատրել է խնդիրը իր տեղեկագրում, որ բաժանւած է կոնգրէսի անդամներին և որի հետ արդէն անդամները ծանօթ են: «Բայց պէտք ասեմ—աւելացնում է հոգեւորը—որ ժամանակ է վերջապէս վերջ գնել այն բարբարոսութիւններին, որոնք գործւում են հայերի դէմ և նախատիւք են մեր եւրօպական քաղաքակրթութեան համար: Եւրօպական պետութիւնների մէջ տիրող զբոսութիւնն ու անհամաձայնութիւնը և միմեանց դէմ տածած անվստահութիւնը առաջ բերին այն սոսկալի աղէտները, որոնց ենթակայ են այսօր քրիստոնեայ հայերը. ամէն մի ազգ վախենում է, որ չլինի թէ թիւրբաց պետութիւնը բաժան-բաժան լինի և ինքն լաւ պատառ չըստանայ»:

Ատենաբանը յայտնում է ապա, որ անցեալ տարի Փարիզի կոնգրէսը հայերի մասին միայն իղձ և փափագ յայտնեց, բայց այժմ բաւական չէ միւսնոյնը կրկնել. պէտք է դիմել ուղղակի եւրօպական պետութիւններին և խնդրել, որ պաշտօնական կոնֆերանս կազմեն՝ հայոց հարցը լուծելու համար, այն հիմունքների վրայ, որ ցոյց է տաւ պ. Հ. Առաքելեանի տեղեկագրի մէջ: Այդ առիթով

Նովիկով հաղորդում է, որ Ամերիկայի Միացեալ Նահանգների խաղաղութեան ընկերութիւնները նամակով յայտնում են կոնգրէսին, որ Ամերիկայում պատրաստւում է ժողովրդական մի ուղերձ նախագահին ներկայացնելու խնդրելով որ նա նախաձեռնութիւն յանձն առնի գումարել պետութիւնների կոնֆերանս հայոց հարցը լուծելու համար: Իվերջոյ տեղեկագրերն կարդում է յանձնաժողովի ծրագրած առաջարկը:

Սկսւում են վիճաբանութիւններ:

Խօսում է Բիրմինգհամ քաղաքի պատւիրակ միսիօնար Ջօզէֆ Ստիւրճ: Նա արտայայտում է իր կատարեալ համակրութիւնը հայերի կրած աղէտների համար, բայց նա դէմ է յանձնաժողովի առաջարկին, որովհետեւ այդ վճռի իրագործումն հնարաւոր է միայն զինւած ուժով, ուրեմն պատերազմով իսկ կոնգրէսի եական նպատակը համաշխարհային խաղաղութիւնն է: Այդ պատճառով նա առաջարկում է անցնել օրակարգին:

Միսիօնար Վիսթէջ ձայնակցում է իր պաշտօնակցին, և նոյնպէս առաջարկում է, թողնելով անհետեանք յանձնաժողովի վճիռն, անցնել օրակարգին: «Այդ միւսնոյն է, ասում է Քրիստօսի աշակերտն, որ մենք առաջարկենք վճիռ կայացնել հրէաների համար Ռուսաստանում, բօէրների և իրլանդացիների համար Անգլիայում: Կընդունի՞ պ. Նովիկովն այդպիսի մի վճիռ. չէ՞ որ հրէաները աւելի վատ հալածանքի են ենթարկւած Ռուսաստանում»:

Բերլինի պրօֆէսոր Գլիտ բողոքում է այդ յայտարարութիւնների դէմ. «Եթէ մենք այնպիսի երկնալիներ ունենանք, թէ այս և այն առաջարկի առիթով պատերազմ կարող է ծագել, ուրեմն ոչ մի գործ չպէտք է կատարենք: Ամթ է. պէտք է վերջապէս դադարեցնել այդ աղէտները»,—բացականչում է նա,—և առաջարկում է ընդունել յանձնաժողովի բանաձևը:

Հայ օրիորդ Վերակոսեան յայտնում է, որ ինքն ևս լինելով թիւրքիայի փախստականներից, որովհետեւ իր ծնողներն սպանւել են ջարդերի ժամանակ, կարծում է, որ թիւրքիայի դէմ ուժ բանեցնելն փաստակար է և որ պէտք է գործադրել բարոյական ուժ...

Հ. Առաքելեան խօսք առնելով վարմանք է յայտնում, որ այսպիսի մի լուսաւոր կոնգրէսի մէջ յանձնաժողովի առաջարկած բանաձևը կարող է ունէլ դիմադրութիւն յարուցանել Ոչ ոք չէ կամենում, որ Եւրօպան պատերազմ յայտնէ հայոց համար. այդ պէտք էլ չէ. բաւական է, որ եւրօպական պետութիւնները հասկացնել տան սուլթանին՝ թէ պէտք է գործադրել ռէֆօրմները, եթէ ոչ՝ իրենք կը գործադրեն, և սուլթանն, ինչպէս փորձերը ցոյց են տուել չի համարձակի չխոնարհւել Եւրօպայի միացեալ կամքի առաջ: Գալով միւս առարկութիւններին, ատենաբանը յայտնում է, որ ինքը կատարեալ համակրութիւն ունի բոլոր ճնշւած ազգերի՝ իրլանդացիների, բօէրների, հրէաների համար, բայց այլ է այդ ազգերի հարցը, այլ է հայոց հարցը. առաջինները հարցեր են վերաբերեալ ներքին քաղաքականութեան, որոնց մէջ կոնգրէսն իրաւունք չունի մտնել, մինչ հայոց հարցը միջազգային հարց է: Վերջապէս, պ. Առաքելեանը յիշեցնում է կոնգրէսին, որ ռուսները չեն կոտորում հրէաներին, չեն յափշտակում նրանց գոյքը, չեն բռնաբարում նրանց պատիւը, ինչպէս և անգլիացիները չեն կոտորում իրլանդացիներին, չեն բռնաբարում նրանց պատիւն, այն ինչ հայերին կոտորում, ջարդում են օրէցօր և այդ՝

քրիստոնեայ, քաղաքակրթած աշխարհի առաջ:
Հետզհետե խօսում են զանազան ատենաբաններ,
որոնց մեծամասնությունը բանաձևն ընդունելու կողմն է:
Նախագահը քուէի է դնում Վ յանձնաժողովի առա-
ջարկած բանաձևն, որն է ընդունելու՝ է անփոփոխ
ահազին մեծամասնությունով:

Ահա այդ վճիռն.

Մատաղություն 10-րդ համաշխարհային ժողովը, զուգարեւած
Դասագովում, 1901 թւի սեպտեմբերին, տեղեկանալով Քէրնի Միջ-
ազգային խաղաղութեան մնայուն քիւրոյի զեկուցման, մի յիշա-
տակագրի հայերի ներկայ վիճակի մասին թիւրքիայում՝ ներ-
կայացւած հայ հրապարակախօս Կ. Հ. Առաքելեանի միջոցով,
և մի նամակի Միացեալ Նահանգների խաղաղութեան ընկե-
րությունների կողմից.

Նկատելով, որ հայ ժողովուրդի տխուր դրութիւնը բնաւ
չէ բարելաւուել, որ կոտորածները եւ խժոժութիւնները շարու-
նակում են Հայաստանում, որ Բեռլինի դաշնագիրը ստորագրող
կերպական պետութիւնները ոչ մի հաւաքական ջանք չեն արել
վերջ դնելու այս դժբախտ քրիստոնեայ ազգի վերաբերմամբ
սխալմտօրէն կատարուող անգթութիւններին,

վճռում է՝

Պաշտօնէի Բեռլինի դաշնագիրը ստորագրող կերպական
պետութիւններին մի խնդրագիր, որպէս զի նրանք մի պաշտօ-
նական կոնֆէրանս գումարեն՝ վճռելու համար հայկական հարցը
զործադրելով 1895-ի մայիսի բարենորոգումների ծրագիրը, որ
մշակել են անգլիական, ֆրանսիական ու ռուսական կառավա-
րութիւնները եւ ընդունել է Նոյնիսկ սուլթանի կողմից:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՆ Ստացած է՝

Կ. Շ-ից 50 ռուբլի, ԱՅԳԵՍՏՆԻՑ 100, Սկանակից 18, Ման-
խոշից 1000, ՈՍԿԱՆԱՊԱՏԻՑ 450, 150 եւ 800, Տեօրեակից 200,
ԱՅԳԵՍՏՆԻՑ 100, «Նուսուլ» խմբ. 78. 30, «Բիլիան» խմբ. 30,
«Արշալոյս» խմբ. 10: Գումար 2986 ռուբլի 30 կօպէկ:

ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՆ

ԼՕՋԱՆԻ մի ռուս ուսանողից 5 ֆրանք, ՈՒԷՍԹ ԶՕՊՕՔԸՆԷՆ
խումբ մը համակիրներ՝ Վ. Պ., Խոսրով 2-ական ռուբլ, Սար,
Պետո, Զարմայր, Ներսէս մէկ-մէկ-ական, Տ. Կ. Գ. 75 սէնթ,
Ցաւակ 50, Անաստ մը 50, Բոժոժ 13, Համ 12 սէնթ: Գումար 10
ռուբլ (51 ֆր. 50 սանթ): Միջնորդին հայ ուսանողներից 29
ֆր. 55 սանթ., Ս-ից 10 ֆր., ԲՐՍՏՕՆԷՆ՝ Յղազն 10 ռուբլ (51
ֆր. 50 սանթ): ՊՈՒՔՐԷՇԻ «Ճարտար» խումբէն 20 ֆր. 50
սանթիմ, Ամար միջոցով գանձուած՝ Ն. Ս. 1, Ամա 5, Մ. Մ.
1, Արիկ 1, Ա. Խ. 2, Մ. Փ.-եան 10, Ինչուս Ինչուս 1, Գ.
Դէրբեան 5, Ե. Ա. 2, Թօլէդո 1 ֆրանք: Գումար 49 ֆր. 50 սանթ:
Ընդամենը 197 ֆրանք 5 սանթ.:

ՆԱԽԱՅԱՆԳՍՏԻ Կեդր. Կօմիտէն՝

«Գազան Տարօնեցի» խմբ. 30 ռուբլի, «Սիփան» խմբ. 45
«Կարէզ» խմբ. 50, «Բ. Նայծակ» խմբ. 20, «Սիլիակ» խմբ. 40,
«Զինուոր» խ. 20, ՍՊԱՆԱՊԵՏԻ «Դերձակ» խմբ. Բայիդուր Իշխան,
Հայ... զեփիւռ, Գիօրկի, Ստ. Շահում, Մ. Նուբար մէկ-մէկ-ական ու
Աղասի 75 կօպ., Տ. Աւետիք 50 կօպ., Ս. Զօրավար 25 կօպ.,
Բ. Զօրավար 25 կօպ., Շահումի միջոցով Մ. Ազարեան 50 կօպ.:
ՆՈՐ-ՔԱՂԱՔԻ «Եփրատ» խումբ Կախարդ, Արշաւանք, Լեւոն,
Բազրատ, Մամիկոն 50-ական կօպ., Խորէն 1 ռուբլի, Զովոն
4 ո. 50 կ., «Հարազատ» խումբ՝ Հրաչեա, Բերս, Արագ, Արաքո,
Հրանդ, Վաշէ 50-ական կօպէկ: Գումար 223 ռուբլի 25 կօպէկ:

ՈՍԿԱՆԱՊԱՏԻ Կօմիտէն՝

Յուլիս «Արաք» խմբ. 70 դանկան ողջ, Գլխարկ 54,
Բար 6. 25, «Աղանի» խումբէն՝ Աղանի, Լուսին, Իւաշոյն 5-ական,
Աործանակ 5. 25: Օգոստոս «Սերոբի» խումբ՝ Հազար 108,
Էտուարդ 20, Միկի 20, «Արաք» խմբ. 80, Արարատ 80, Գըլ-
խարկ 20: ԱժԵԱՆԱՔԷՆ՝ Վահագն 60, Նիզակ 60, Վահան 40,
Վրէժ 20, Վարդ 20, Արեւ 20, Առիւծ 10, Ժիրայր 10: Ա. քղ-ի
«Մեղանուն» խումբ՝ Մեզ, Եռան, Սալորիկ, Տանուտէր 20-ական,
Չո. քղ-ի «Թուզ» խումբ՝ Թուզ 30, Մերսին, Մօրէմուկ, Հայիդ
20-ական, ՄՐ. քղ-էն՝ Ժառ, Ժաղիկ, Աղբիւր 20-ական, Վարպետ
15: ԱԻԵՐԱԿ քղ-էն՝ Սնո 20, Լնգիւացի 20: ՊԼՃ. քղ-էն՝ Խլաթ
12: ՇՄԼ. քղ-էն՝ «Մերուսան Արծրունի» խմբ. 50: ԶՃ. քղ-էն՝

Աղբատասէր Անուշան 60, ԳԱԳԱՔԷՆ՝ Գանուկ, Երկաթ, Զար,
20-ական: ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ խմբէն՝ Պերժ 21, Զարեհ 10. 50, Սուրէն
12. 50, Հայկ 8. 50, Բեւ 6. 25, Վրոյր 5. 25, Շաւարշ 9. 50 դահ.:
Գումար 1299 դանկան ողջ:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կեդր. Կօմիտէն՝

«Թաթուլ» խմբ. 35 դանկան, «Վրէժ» խմբ. 5, Զօլո 44,
«Զոհ» խմբ. 10, «Արծրունի» խմբ. 35, «Յառաջ» խմբ. 25, Ուս-
սիսի Ժերունին 168, Տիրացու Սաթի միջոցով՝ 496, Նանեկան
10, Աշղ 20, «Յառաջ» խմբ. 25, Կամաուր 20, «Կրակոտ» խմբ.
17, ԶինԱՄԷՐ զիւղի խմբ. 40, եւս 40, ԿԱՐՄԻՐ զիւղի խմբ. 17,
ՀԱՅԿԱՅ «Հալլաստ» խմբ. 20, ՈՒՌԵՆԻ եւ ՇԱՀ զիւղեբու խմբ. 20:
ԼՕԼՕ-էն՝ Զաւլիկ 108, Զրաի 108, ԽՆՁՈՐ զիւղ 60, «Պուրդու»
խմբ. 40, ՍԵՆ ԲԵՐԴ՝ 20 եւս 104, ՍԱՐ զիւղ 40: Գումար 1527 դանկան:

ՎՐԷՇԻ Կեդր. Կօմիտէն՝

Հանգանակութիւն Տաննամեակի առթիւ՝ Միւնիսթեր «Մաշ»
զիւղից 300 դանկ, ՍԱՐ զիւղից 100, Տ. Թ. 50, Մ. Մ. Մ. 20,
Ա. Ա. 10, Ս. Շ. 10, Գ. քղ-ից՝ Մ. 10, «Կացին» խմբ. 10,
Պ. 6, Կ. 10, Հ. 10, Օ. 6, Վ. ք. Մ. 40, Ս. Մ. Բ. 40
X՝ 20, ՍԱՐ զիւղից՝ 56, Պարթեւ 150, Եղ. Ս. Ա. 200, Բ. Մ.
150, Եղ. Ս. Շ. 150, Բ. 2. 150, Որ. Բ. Ա. 200, Ս. Բ. 120,
Գ. Հ. 150, Ն. Ա. 70, Զ. 70, Մ. Մ. Հ. 30, Ե. Հ. 50, Մի
ուն 30: Գումար 2218 դանկ:

ԱԻԱՐԱՅՐԻՑ՝ Մարտար 200 դանկ, Վ. 15, Կ. Խ. 10, Մ.
5, Ա. 10, Ս. 10, Ուն 5, Գ. 6, Կ. 5, Վաստրախանցի 5, Տէր
Վ. 50, Մ. 30, Ն. 15, Զ. 30, Դ. 15, Խ. 30, Գ. 10, Զարդին
30, Պ. Խ. 10, Ս. 8, Բ. 7, Օ. 8, Ս. 6, Դ. 6, Կ. 4, Ա. 30:
Գումար 510 դանկ:

ՍԱԲ-ԱՅՐԻՑ՝ Շիրակ 160 դանկ, Յովնանէս Գ. 22, Շահէն 30, Մ.
Վ. 20, Միլքում 20, Հայ 10, Ուն 4, Հայկ 20, Սիւնեակ 20,
Մ. Ե. 2. 20, Սասուն 20, Ուն 10, Շահէն 32: Գումար 388
դանկ: Ընդհանուր գումար 3116 դանկ:

ՎՐԻՊԱԿ. «Դրօշակի» 1901 թ. N 5-ի վրէժի ցանկին մէջ
ըսւած է՝ ՇԱՀՐՈՒԹԻՑ՝ Շահէնի միջոցով՝ 250, պէտք է բլայ
«ԵՆԱՆԱՐԱԳԵԱՋԻՑ» Շահէնի միջոցով՝ 262 դանկ. Կ. Մ. Ա. 50
դանկ, Վազէ 20, Խալդիկ 10, Կայծ 10, Մուսումնար 10, Ա. Ս.
20, Նաղիւր 20, Պետրոս 50, Ե. Գ. 20, Ա. Ե. 10, Ե. 2,
Դավթէժ 10, Տ. Մ. Ե. 5, Ա. Մ. Խ. 10, Կ. Գ. Մ. 2, X 5,
Պետրոս 8 դանկ:

ՐՈՒՍԱՆԻԱ՝

ՔՕՍՏԱՆՁԱՅԻ «Դեւեան» խմբ. ստացած է՝ համակրողների
Գ. Գ. 10 ֆրանք, Տրդատ եւ Գ. 5, Մ. Ա. 2, «Հեւոնդեան»
խմբ. Հրանդ, Հայկակ, Լեւոն, Գեղամ, Վարդաշակ, Զաւէն 8. 75,
Հայկակ, Հրանդ, Զաւէն 5-ական, Մուշեղ 6. 25, Վաստապուհ
2. 50, «Զորս Գանձ» խմբ. Թորգոմ, Զարմայր, Բարկէն, Արտա-
ւազդ 5. 50, Զարմայր 6, Բարկէն, Կրակ, Թորգոմ, Թաթուլ
5-ական, Արտաւազդ 3. 75, Թոշնիկ 1. 25: Գումար 86 ֆրանք:

ՍՈՒԼԻՆԱՅԻ (յուլիս, օգոստ. եւ սեպտ.) «Կարին» խումբէն՝
Արամ 8 ֆրանք, Գազարով 8, Ճարտար 5, Կարո 4, Յովնան
4, Վրդանէս, Գուրգէն, Բարկէն, Աշոտ, Տիրացու, Վահրամ, Հայկ,
Միհրան 3-ական, «Նոր-Դար» խումբէն՝ Համազասպ, Միսակ,
Վահրիկ, Հրանդ, Պետրոս 3-ական, Տրդատ 7, Ասպետ 7, Խորէն
6, Պարթեւ 5, Խոսրով 4, Միքո 6, Բարեանէր մը Ստ. Ս. Աւե-
տիսեան 2, Օղեսայի «Խնդրակատար» խումբէն՝ 23. 85: Գումար
128 ֆրանք 85 սանթիմ:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Միութեան բանակցութիւններու առթիւ մեզ գիմող
ընկերներուն կը յայտնենք, որ այդ բանակցութիւնները
առեւել մը իվիր վարող չէզոք անձնաւորութեան ստաց-
ւած գրութեան մը համաձայն՝ շուտով անոր վերջ-
նական խօսքին կը սպասուի: Ամբողջ սրտով կը փա-
փաքէինք, որ այդ խօսքը նպաստաւոր ըլլար յեղա-
փոխական բոլոր անկեղծ ասարեբու միութեան:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ